Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

6-7(681-682)
25.03.2023
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

«ՄԵԶ ՊԵՏՔ Է ԱՌԱՎԵԼ ԿԱՐԳԱՊԱՀ, ԱՌԱՎԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ, ՆՈՐԱՐԱՐ ԵՎ ԳԻՏԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱԿԱՐԳ»

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մարտի 16-ին ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ Նորայր Յակովի Մկրտչյանը նշանակվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար:

Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը մարտի 16-ին կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմին է ներկայացրել նորանշանակ նախարար Նորայր Մկրտչյանին:

Պետական նախարարը երախտագիտություն է հայտնել նախարարի պաշտոնակատար Հասմիկ Մինասյանին և կրթության ոլորտի բոլոր պատասխանատուներին՝ Արցախի շրջափակման այս ծանրագույն շրջանում ցուցաբերած անձնանվեր աշխատանքի համար, իսկ Նորայր Մկրտչյանին մաղթել բեղմնավոր աշխատանք:

«Մեզ անհրաժեշտ է առավել կարգապահ, առավել կազմակերպված, նորարար կրթության համակարգ, որը դասական դպրոցական կամ լսարանային կրթությունից զատ ունակ է թողարկել ժամանակակից մտածողությամբ երիտասարդություն, գիտական մտածողություն ունեցող սերունդ, հայրենիքի պաշտպան, դաստիարակված ու պիտանի հանրության անդամ»,- իր խոսքում ասել է պետական նախարարը:

Հանդիպմանը քննարկվել են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում առկա օրակարգային մի շարք հարցեր, կարևորվել է մարզամշակութային կյանքի ակտիվացումը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ՆՈՐԱՅՐ ՅԱԿՈՎԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ծնվել է 1975 թվականին Ստեփանակերտ քաղաքում:

Կրթություն

2000թ. - Մոսկվայի ռազմական ակադեմիա, «Ունիվերսում» ինստիտուտ՝ էրիկսոնյան հիպնոզի որակավորում:

1991-1996թթ. - Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան՝ պատմության և օտար լեզվի բաժին:

1981-1991թթ. - Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան համար 1 միջնակարգ դպրոց:

Աշխատանքային գործունեություն

2023թ. մարտի 16 - ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար:

2021թ. - ԱՀ ՊԲ հրամանատարի՝ բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ:

2019թ. – ՊԲ բարոյահոգեբանական ապահովման բաժնի պետ:

2011թ. – ՊԲ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ:

2006թ. – միավորման հրամանատարի տեղակալ՝ ԱՀՏԱ գծով:

2006թ. – զորամասի հրամանատարի տեղակալ՝ ԱՀՏԱ գծով:

2003թ. – զորամասի հրամանատարի տեղակալ՝ ԴԱ գծով:

2000թ. – զորամասի հրամանատարի՝ ԱՀՏԱ գծով տեղակալ:

1993թ.- N զորամասի ՀՄՄ 2-ի նշանառու օպերատոր:

Պարգևներ

Պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, «Անբասիր ծառայության համար» 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի, «Արիության», «Մարտական ծառայություն», «Գարեգին Նժդեհ», «Մայրական երախտագիտություն», «ՀՀ զինված ուժեր 20 տարի», «Մարշալ Բաղրամյան», «Դրաստամատ Կանայան», «Հայաստանի երկրապահ», «Անվտանգության մարմինների 100-ամյակ», «ՀՀ զինված ուժեր 30 տարի», «Ներսես Շնորհալի» և այլ պետական ու գերատեսչական մեդալներով:

Այլ տվյալներ

1993-1994թթ. մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին:

Ամուսնացած է, ունի երկու դուստր և մեկ որդի:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 144-ԱՄՅԱԿԻՆ

Մարտի 22-ին ԱՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բաժնի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառումների շարք՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության ականավոր պետական, հասարակական, ռազմական գործիչ, հայոց նորագույն պետականության հիմնադիր Արամ Մանուկյանի ծննդյան 144-ամյակին: Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպված՝ «Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը» խորագրով ցուցահանդեսին ներկա էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը, ԱԺ պատգամավորներ, պետական այրեր, գերատեսչության անդամներ:

«Արամ Մանուկյանը մեզ և գալիք սերունդներին ավետել է մի մեծագույն ազգային կենսաբարոյական նշանակության պատգամ, այն է՝ ապավինել մեր սեփական ուժերին, երբեք չվհատվել, շարունակել պայքարը հանուն ազատության և անկախության՝ մինչև հաղթական ավարտ: Ասել է թե, եթե ուզում ես քո նվիրական հայրենիքում ապրել խաղաղ ու երջանիկ, եթե ուզում ես տեր լինել քո նախնիներից ժառանգած սրբություններին ու սրբավայրերին, հանուն այդ արժեքների պատրա՛ստ եղիր կատաղի և անզիջում պայքարի: Այսօր պատեհ առիթ է ևս մեկ անգամ վերահիմնավորելու մեր ազգի անցած ճանապարհը Արամ Մանուկյանի ժամանակներից մինչև մեր օրերը»,- ելույթի իր խոսքում նշեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը:

«Արամը պայքարում էր բոլոր տեսակի խորթ երևույթների դեմ, և ամենամեծ պայքարն ուղղված էր հայ ժողովրդի հատվածականության դեմ: Հատկանշական է թշնամու հետ բանակցություններ վարելու նրա հմտությունը. թեպետ դիվանագետ չէր, բայց հաջողությամբ էր վարում բանակցությունները»,- ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանն ամբողջացրեց Արամ Մանուկյանի կերպարը:

ՀՅԴ գերագույն մարմնի անդամ, ԱՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Իշխանյանը համեմատություններ անցկացրեց Արամ Մանուկյանի ժամանակների և մեր օրերի միջև՝ ընդգծելով. «Արամ Մանուկյանը մեր վերջին 100-ամյա պատմության մեջ պետական մտածելակերպ ունեցող գործչի լավագույն օրինակն է: Լիահույս եմ, որ ուսումնասիրելով Արամ Մանուկյանի կերպարը՝ ամեն ոք կփորձի իր մեջ գտնել Արամ Մանուկյանին: Նրա պատգամն իրագործված կլինի, եթե յուրաքանչյուրս ապրենք այդ ոգով, այդ ոճով և գործելակերպով»:

Այս դժվար ու խառը օրերին Արամ Մանուկյանի ազդեցիկ ու բացառիկ կերպարի մասին

խոսելու, նրա կենսագործունեության հետ հերթական անգամ առնչվելու հնարավորությունը կարող է հույս ու հավատ ներշնչել, որ ամենաօրհասական ու անելանելի թվացող պահերին էլ ազգի փրկությունն ու պետականության վերականգնումը հնարավոր է, եթե, իհարկե, կա նվիրյալ առաջնորդ, ում համար ազգային ու պետական շահն ամեն ինչից վեր է:

«Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը» խորագրով ցուցահանդեսն այցելուների համար բաց կլինի երկու շաբաթ:

Օրվա երկրորդ կեսին Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում անցկացվեց «Արամ Մանուկյան պետական գործչի ավանդը հայկական պետականության հիմնադրման և կայացման գործում» խորագրով դասախոսություն-քննարկում:

Բանախոսները՝ ԱՀ նախագահի խորհրդական Արմեն Սարգսյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանն ու նախարարի խորհրդական Մելանյա Բալայանը, ներկայացրին պետական գործչի կյանքը, գործունեությունը, դերը հայկական պետականության կայացման գործում: Հանդիպումը բանախոսների համար առիթ էր ևս մեկ անգամ խոսելու Արամ Մանուկյանի մեծության մասին, համեմատություններ անցկացնելու մեր օրերում տեղի ունեցող իրադարձությունների հետ, իսկ քննարկմանը մասնակցող երիտասարդների համար հնարավորություն՝ բացահայտելու Արամ Մանուկյանի բազմաշերտ կերպարը, հարուստ կենսագործունեությունը:

Քննարկման առանցքում հայրենիքի ու պետականության գաղափարն էր, մեր օրերում Ա. Մանուկյանի պես բացառիկ հատկանիշներով օժտված առաջնորդ ունենալու, գաղափարի շուրջ համախմբվելու անհրաժեշտությունը:

ԱՀ ԿԳՄՍՆ

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՊԱՅՔԱՐՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ Է՝ Ե՛Վ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ, Ե՛Վ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԵՋ

«Որքան էլ դժվար լինեն ժամանակները, միևնույն է, գարունը ամենապայծառն ու ամենահուսադրողն է, որովհետև գարնանամուտն ազդարարում է նաև տարվա ամենագեղեցիկ տոն օրվա՝ Կանանց միամսյակի մասին»: Այս խոսքով է բացվել մարտի 16-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի ցուցասրահում կազմակերպված միջոցառումը, որը նախաձեռնել էր ԱՀ ԿԳՄՍՆ աշխատակազմի նախազորակոչային պատրաստության և արտադպրոցական ծրագրերի վարչության արտադպրոցական ծրագրերի բաժինը՝ կազմակերպելով հանրապետության շրջանների ՄՊՍԿ-ների սաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-մրցույթ, որի հիմնական նպատակն է նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը, խթանել նրանց ստեղծագործական ունակությունները, աջակցել գործնական հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև ամրապնդել ՄՊՍԿ-ների միջև կապը՝ ապահովելով արդյունավետ փորձի փոխանակում:

Միջոցառումը վարող Մարիաննա Բաղունցը կազմակերպիչների անունից նախ շնորհավորեց գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին՝ Կանանց միամսյակի առթիվ՝ մաղթելով իրական արցախյան գարուններ, որ անուշաբույր ծաղիկները զարդարեն նրանց օրերը, և որ անցյալո՛ւմ մնան բոլոր կորստաբեր էջերը: Եվ խոնարհում այն բոլոր մայրերի առջև, որոնք հայրենիքին նվիրեցին իրենց ամենաթանկերին, բոլոր այն կանանց, ովքեր մարտի դաշտից ամուսիններին այդպես էլ չդիմավորեցին, բոլոր այն քույրերի ու աղջիկների, ովքեր դեռ սպասումով են…

Ներկաները սկզբում վայելեցին ստեղծագործական կենտրոնների պատրաստած գեղարվեստական համարները՝ պար, ասմունք, երգ:

Հաղորդավարը յուրաքանչյուր համար հայտարարում էր գեղեցիկ բնորոշումով:

Մայրերին են ձոնվել ամենագեղեցիկ բանաստեղծություններն ու երգերը: Արամայիս Սահակյանի «Մայրիկիս» բանաստեղծությունը արտասանեց Շուշիի ՄՊՍԿ ասմունքի խմբակի սան Նաիրա Սարուխանյանը (խմբակավար՝ Սուսաննա Ստեփանյան):

«Այս և սրա նման օրերում, երբ Արցախն ու արցախցին գտնվում են շրջափակման մեջ, ավելի պետք է արժևորենք մերը՝ հայկականը: Այսօր, երբ բոլորս պայքարում ենք մեր հողում ապրելու համար, Արցախում պիտի հնչի հենց հայկական երգն ու երաժշտությունը»: Եվ այս խոսքերից հետո առաջ են գալիս Ասկերանի ՄՊՍԿ Այգեստանի մասնաճյուղի պարի խմբակի (խմբակավար՝ Նանար Բարսեղյան) սաները՝ ներկայացնելով «Տարազ» պարը: Իսկապես, ինչքա՜ն գեղեցիկ են մեր աղջիկները, երբ հագնում են հայկական տարազ ու պարում հայկական պարեր:

«Մայր» բառը տիեզերական ո՞ր երևույթի հետ կարելի է համեմատել. հաղորդավարն առաջարկում է դա միասին պարզել Ռուբեն Կարոյանի՝ «Մայր» բանաստեղծությամբ՝ Մարտունու ՄՊՍԿ ասմունքի խմբակի (խմբակավար՝ Իննա Աբրահամյան) սան Ավետ Ղազարյանի միջոցով. «Երկիրն իր չափով մեծ է, խոսք չունեմ, բայց երբ մի վայրկյան նստեմ մորս քով, աշխարհն ինչի՞ս է, տիեզերքն ունեմ»:

Գեղեցիկ են բոլոր այն երգերը, բանաստեղծությունները, որոնք ձոնված են մայրերին: Ստեփանակերտի ՄՊՍԿ վոկալ բաժնի (խմբակավար՝ Հրաչուհի Ղահրամանյան) սան Վարդուհի Մնացականյանը դա հաստատում է իր «Մայրիկ» երգով:

Հուսադրող է, երբ Ստեփանակերտում իրենց մի մասնիկն են բացել Շուշիի ու Հադրութի ՄՊՍԿ-ները: Հասկանում ենք, որ պայքարը շարունակվում է: Հադրութի ՄՊՍԿ պարի խմբակի (խմբակավար՝ Մարիամ Հարությունյան) սաների կատարմամբ «Հայկական պար»-ը հույս է ներշնչում, որ դեռ գալու են լավ ժամանակները:

Հադրութի ՄՊՍԿ տիկնիկային թատրոնի խմբակի (խմբակավար՝ Արմեն Գաբրիելյան) սան Անուշ Պետրոսյանը շիրազյան տողերով է գովերգում մայրական սերը:

Դահլիճում վերստին տրամադրություն է բարձրացնում հայկական երաժշտությունը, այս անգամ՝ Մարտակերտի ՄՊՍԿ պարի խմբակի (խմբակավար՝ Մարիամ Ստեփանյան) սաների միջոցով:

Այս ելույթներից հետո ներկաները շրջում են ՄՊՍԿ-ների տաղավարներով՝ ծանոթանալու դրանց բովանդակությանը, որոնք, անկեղծ ասած, իրենց ձևավորումներով հեռվից էլ կանչում էին: Ընդհանուր ինչ-որ բան ունենալով հանդերձ՝ յուրաքանչյուրն իր առանձնահատկությունն ունի: Ներկաները երկար կանգնում են Մարտակերտի ՄՊՍԿ-ի մեծ ու փոքր գոբելենների, նկարների, գործած սփռոցների, Հադրութի «Դռներ»-ի, Մարտունու՝ նուրբ ժանյակների, Ասկերանի՝ բազմազան ցուցանմուշների, Շուշիի՝ Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոցի, Ստեփանակերտի՝ հուլունքագործության և այլ աշխատանքների առջև:

Յուրաքանչյուր ՄՊՍԿ փորձել է Մայրության և գեղեցկության տոնի թեմայով իր տարբերակը ներկայացնել, ինչն էլ հենց մրցույթի գնահատող հանձնաժողովը հաշվի էր առնում: Վերջապես հասնում է ամփոփման ժամը: Հանձնաժողովի նախագահ՝ ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Մելանյա Բալայանն ընդհանրացնում է հանձնախմբի անդամների գնահատականները:

- Այսօր այս բարդ իրավիճակում այստեղ՝

մեր հայրենիքում ապրելով, արարելով նորից փորձում ենք ապացուցել, որ մեր ժողովուրդը հավերժ է, և մեր պայքարը դեռ չի ավարտվել: Պայքարն ամենուրեք է՝ և՛ աշխատանքում, և՛ ստեղծագործելու մեջ, այսինքն՝ յուրաքանչյուրս յուրովի ենք պայքարում մեր հայրենիքի համար:

Մ. Բալայանը խոստովանեց, որ հանձնախմբի համար դժվար է առանձնացնել որևէ մեկին, քանի որ բոլոր աշխատանքներն էլ արժանի են բարձր գնահատանքի: Պարզապես ելել են այն հանգամանքից, թե յուրաքանչյուրը ինչքանով է հարազատ մնացել թեմատիկային:

Հանձնախմբի որոշմամբ բոլոր մասնակիցները պարգևատրվեցին նախարարության պատվոգրով ու արժեքավոր նվերներով (նվերներն ընտրվել են այն հաշվարկով, որ դրանցով նոր աշխատանքներ ստեղծվեն):

Ժյուրիի գնահատման արդյունքներով առանձին պարգևատրվեցին Մարտակերտի ՄՊՍԿ-ի գոբելենի խմբակը, լավագույն աշխատանքի հեղինակ՝ Ստեփանակերտի ՄՊՍԿ սան Օֆելյա Թորոսյանը, ակտիվ մասնակցության համար՝ Մարտունու, Հադրութի և Շուշիի ՄՊՍԿ-ները:

Մրցանակային երրորդ տեղն զբաղեցրեց և նախարարության պատվոգրով ու արժեքավոր նվերով պարգևատրվեց Մարտակերտի շրջանի ՄՊՍԿ-ն: Երկրորդ տեղը բաժին հասավ Ստեփանակերտի ՄՊՍԿ-ին: Առաջին տեղին արժանացավ Ասկերանի ՄՊՍԿ-ն:

Վերջնական գնահատականն այս էր. բոլորն են հաղթողներ, քանի որ շարունակում են ստեղծագործել, ապրել ու արարել Արցախ աշխարհում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԵՐ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ՈՒ ԱՆՍՊԱՌ ՄԱՅՐԵՆԻՆ

«Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը…»:

Աբովյանական այս ոսկե տողերով եմ սկսում գրվածքս, քանի որ այսօր առավել, քան երբևէ, պետք է գիտակցենք այս բառերի նշանակությունը: Մեր սրտում և մտքում հար ու հավետ թող հնչեն մեր մայրենիին՝ հայոց լեզվին ձոնված ամեն բառ ու խոսք՝ որպես մեր ինքնության, մեր գոյության, մեր կամքի ու պայքարի ահազանգեր: Իսկ այդ զանգերն անընդհատ ու հստակ հնչեցնել է պետք: Այդպիսի մի զանգ էր փետրվարի 21-ին մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցած մրցույթ-ցերեկույթը՝ նվիրված մայրենիին:

Պահը խորհրդավոր էր, խորհրդանշական. չէ՞ որ երկու ամսից ավել շրջափակման մեջ գտնվող արցախցի հրաշամանուկները ոչ միայն եկել էին իրենց թոթովախոս շուրթերով գովերգելու մեր մեսրոպաշունչ, աստվածային հայերենը, այլև մրմուռից դաղված սրտի սթափեցնող խոսքը հղելու «կույր ու խուլ» աշխարհին, հաստատելու, որ իրենք այստեղ են՝ այս սուրբ հողակտորում, աշխարհից ու ամենքից անտեսված, բայց աշխարհին ու ամենքին թեկուզ աննշան օգտակար եղած այս «անհաղթելի մի բուռ աշխարհում»՝ Արցախում: Եկել էին, որ խրոխտ ձայնի ելևէջումները հայտնեն այն փակ ականջներին, որ առայսօր «չեն լսում», եկել էին՝ իրենց աչքերի անհուն պարզությամբ արտացոլելու հոգում եղած վիշտն ու հիասթափությունը, միևնույն ժամանակ ուժ գտնելով՝ փառաբանելու մեր պատմության փառավոր էջերը:

Որքա՜ն ուժ ու կամք, որքա՜ն հավատ և հաստատակամություն կար այդ ջինջ աչուկների խորտակող հայացքներում: Այո՛, նայում ես ու խորտակվում, ընկղմվում իրականության խորքը, որտեղից ծովը ներթափանցած արևի շողի պես վառ ու պայծառ երևում է այն լուսավոր կետը, որ խաղաղություն և բարություն է կանխորոշում:

Եվ հասկանում ես, թե որքան ուժեղ ու անկոտրում են մեր զավակները, որ իրականում նրանք են մեզ ապրելու, արարելու ուժ տալիս, հույս ներշնչում:

Մրցույթի ընթացքում Մարտունու շրջանը պատվով ներկայացրին Սոսի՝ Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտները, որոնք ԱՀ ԿԳՄՍՆ-ի կողմից առանձնահատուկ ուշադրության արժանացան: Մեր սաները, գիտակցելով այգեկցիական առակների բարոյախոսությունը, սրտում կրելով կոմիտայան «Կռունկ»-ի կարոտի ելևէջները, հավատալով հայոց կանաչ լեռներում կարոտով սպասված պայծառ գալիքին, Աստծուց խնդրելով հույսի և լույսի հայրենիք, հանդես եկան ելույթներով, որոնք անտարբեր չթողեցին հանձնաժողովի անդամներին:

Օրեր անց՝ մարտի 16-ին, Սոսի միջնակարգ դպրոցում հանդիսավոր տողան էր՝ նվիրված վերոհիշյալ մրցույթում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների պարգևատրման արարողությանը: Միջոցառումը խորհրդանշական էր նաև այն առումով, որ փետրվարի 19-ը Ամենայն հայոց բանաստեղծ Հովի. Թումանյանի ծննդյան օրն է, և այդ օրն էլ համարվում է Գիրք նվիրելու օր, ուստի աշակերտներին ԱՀ ԿԳՄՍՆ Լեզվի տեսչության պետ Արտակ Ղուլյանի կողմից անձամբ շնորհվեցին պատվոգրեր ու գրքեր: Գրքերն Արցախի մշակույթի, պատմության հուշարձանների պահպանության մասին էին, որոնց ընթերցանությունն էլ ավելի կնպաստի մատաղ սերնդի հայրենասիրական մղումներին, դաստիարակչությանն ու ամրապնդմանը:

Պարգևատրվեցին Սուսաննա Ավետիսյանը՝ Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ կազմակերպված մրցույթում մայրենի լեզուն անաղարտ պահելու գործում ունեցած ավանդի համար, 8-րդ դասարանի աշակերտ Կարեն Հարությունյանը՝ մրցույթում 1-ին տեղը գրավելու համար, 8-րդ դասարանի աշակերտուհի Մայա Ղահրամանյանը՝ մրցույթում հաղթելու համար, 5-րդ դասարանի աշակերտուհի Արիանա Ստեփանյանը՝ մասնակցության համար, 4-րդ դասարանի աշակերտ Մարտին Գաբրիելյանը՝ մրցույթի «Նոր շունչ» անվանակարգում հաղթելու համար:

Աշակերտներին ոչ միայն պատրաստում են մրցույթին, այլև ոգևորում, թև են տալիս մեր բոլոր ուսուցիչները: Այսօր տեղին է, և հարկ է առանձնահատուկ շնորհակալություն հայտնել Սոսի միջնակարգ դպրոցի ՄԿԱԳՏՏ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Ավետիսյանին և երաժշտության ուսուցիչ Արսեն Բաղրյանին: Թող ձեր ուժն ու եռանդը անսպառ լինեն՝ բարին, գեղեցիկը, դրականը, վեհն ու վսեմը սերմանելու սերունդներին: Թող այս սաների մեջ ապագայում հասունացած տեսնենք ձեր ստեղծագործական հունդի փթթուն ծիլերը: Թող արցախցի մանուկների շուրթերից հնչած խոսքերը հավետ լռեցնեն ամեն տեսակի վայրահաչոց, և Արցախն ապրի՜, ծլի՜, ծաղկի՜…

Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Սոսի միջն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՅՍՕՐ

Ադրբեջանի կրթական համակարգը ներծծված է հայատյացությամբ: Հայի՝ որպես թշնամու կերպարի ձևավորումը տեղի է ունենում բոլոր հնարավոր հարթակներով ու միջոցներով: Ընտրված է առավել ազդեցիկ ճանապարհը՝ հանրակրթական դպրոցն ու մանկապարտեզը: Մանկապարտեզից սկսած, հայը թշնամի է, Ղարաբաղն ու Հայաստանը «զավթված ադրբեջանական պատմական հողեր են», որոնք պետք է հետ բերվեն: Հայատյացության ու դեհումանիզմի սաղմնավորումը սկսվում է մանկապարտեզից և որպես պետական քարոզչության գլխավոր առաջնահերթություն՝ դրսևորվում կրթական համակարգի բոլոր օղակներում ու ծրագրերում: Այն ոչ միայն ծրագրված ու սուբստանց նկարագիր ունի հանրակրթական ծրագրերում, այլև, օրինակ, արտադպրոցական աշխատանքներում: Հոդվածում որպես օրինակ կարող ենք մի քանի նկարներ ցույց տալ ադրբեջանցի երեխաների ու պատանիների նկարած նկարներից: Սարսափելի է, երբ կեղծարարության, ստի ու հայատյացության քարոզը դարձել է նաև ադրբեջանական հեքիաթների սյուժեն և բովանդակությունը:

2015 թվականին Ադրբեջանի Ազգային ժողովի հովանու ներքո կազմակերպվել է առաջին թատերական փառատոնը երեխաների ու երիտասարդների համար, որի գլխավոր թեման հայրենասիրությունն էր: Փառատոնին հաղթած բեմադրություններից էր Շ. Խեյրուլլայի «Իմ թշնամական խաղալիքը» մոնոներկայացումը, որտեղ խաղալիքի սիմվոլացումը կատարվել է հայ մեծ զորավար Անդրանիկ Օզանյանի հետ: Բայց Անդրանիկն այստեղ զորավար չէ, այլ խաղալիք: Այստեղ կերպարի ապամարդկայնացումից և ապանձնայնացումից զատ տեղի է ունենում հայ հերոսի ծայրահեղ վարկաբեկում, որի տակ մտնում է նաև մի ամբողջ ժողովուրդ:

Հայի՝ որպես թշնամու կերպարի ծայրահեղ վարկաբեկման օրինակներ են «Հեքիաթ Իլհամի մասին», «Վատ հարևան» «Իլհամի կինը», «Անմեղ կինը» հեքիաթները: Առաջին հեքիաթում Իլհամը բարի ու աշխատասեր դարբին է, և դավաճան հայերը անմեղ մարդուն առանց պատճառի սպանում են: Հեքիաթում դավաճանության որակներ են վերագրվում հայերին ու ռուսներին: «Վատ հարևան»-ի մեջ Ռովշանը դրական կերպարի մարմնացում է, իսկ հայի բացասական կերպարն արտացոլվել է Վարդան անունով մարդու միջոցով, որն ունի ամենավատ մարդկային որակները և նախանձից դրդված խեղճ Ռովշանին նետում է ջրհորը: Իսկ «Անմեղ կինը» հեքիաթի բացասական կերպարը մարմնավորվել է հայանուն աղջկա՝ Սիրանույշի մեջ: Նա Հայաստան աշխարհից ուղարկված խաբեբա է, որը չարաշահում է շահի վստահությունը: Հեքիաթից է սկսվում ոչ միայն գեղարվեստական աշխարհի ճանաչումը, այլ նաև սոցիալականացման գործընթացը: Այսպիսի հեքիաթները, որոնց շարքը երկար կարելի է շարունակել, չեն կարող սերնդի դաստիարակության ու սոցիալականացման ճիշտ ճանապարհ դառնալ:

Հայատյացությունը համակարգված ու ծրագրված է՝ սկսած հանրակրթական դպրոցների տարրական օղակից: Դրանք «Ադրբեջաներեն լեզու» և «Ճանաչիր աշխարհը», «Ռուսաց լեզու», «Ադրբեջանի պատմություն», «Ադրբեջանի աշխարհագրություն», «Գրականություն» և այլն դասագրքերի շրջանակներում են, որտեղ հայերի թշնամական կերպարը հասցված է ծայրահեղ վարկաբեկման: Ի դեպ, հայկական դպրոցների հանրակրթական ծրագրերի տարրական օղակում չկա և ոչ մի ստեղծագործություն, պատմվածք ու բանաստեղծություն, որը վերաբերի ադրբեջանցիներին կամ թուրքերին, կամ էլ բովանդակային առումով լինի ատելությամբ, թշնամանքով ու ագրեսիայով լցված: Մինչդեռ Ադրբեջանի հանրակրթական դպրոցներում առավոտը սկսվում է «Ղարաբաղը Ադրբեջան է» ուղերձով: Դպրոցականները երեք անգամ բարձրաձայն կրկնում են «Ղարաբաղն Ադրբեջան է» արտահայտությունը, երեք անգամ կրկնվում է հայերի՝ թշնամի լինելու արտահայտությունը՝ դուշման, դուշման, դուշման: Թշնամական կերպարի գեներացիան հասցված է սևեռուն մտքի. այն ամենուր է: «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Երաժշտություն» դասագրքերը, որոնք առաջին հայացքից, թվում է, հնարավոր չէ հայատյացության մասին որևէ բովանդակություն պարունակեն, բայց այստեղ ևս առաջադրված խնդիրներն անգամ կառուցված են հայերի նկատմամբ արտահայտված խորն ատելության ու թշնամանքի հիմքի վրա: Մանկական բանաստեղծություններ, շուտասելուկներ, ասացվածքներ, շրջասույթներ, երգեր, բեմադրություններ, որոնք ագրեսիայի վերբալ դրսևորումներ են: Մանկական ու պատանեկան նկարների ցուցահանդեսները նույնպես կանխատրամադրվածության ու ստերեոտիպ վարքի դրսևորումներ են:

44-օրյա պատերազմից հետո մեծ ինտենսիվությամբ սկսել են տպագրվել գրքեր, որոնցում Արցախը ներկայացված է որպես Ադրբեջան: Ի դեպ, միայն Արցախը չէ, Հայաստանը, Երևանը, Սևանա լիճը ևս ներկայացվում են որպես Ադրբեջանի օկուպացված տարածքներ: Պատկերազարդ «Շուշի» գիրքը նախատեսված է ինչպես նախադպրոցական տարիքի երեխաների, այնպես էլ կրտսեր դպրոցական և պատանեկության տարիքի երեխաների համար: Բանաստեղծ Ռուսլան Նովրյազի բանաստեղծությունները մտցվել են ուսուցիչների համար երաշխավորված մեթոդական գրականություն, որոնք նրանց հայեցողությամբ օգտագործվում են դասագործընթացում, երեխաների հետ կազմակերպվող միջոցառումներում: Մեթոդական նյութերը երաշխավորված ու հաստատված են լիազոր մարմնի կողմից:

Բավական է այդ նյութերից մեջբերել մեկ կամ երկու բանաստեղծություն, ինչը կամբողջացնի ասվածի պատկերը:

«Հայերը» բանաստեղծության մեջ, որի հեղինակը Ռուսլան Նովրյազն է, հանդիպում ենք.

Եթե նա քնած է օրորոցում,
Դանակդ երկար մի՛ պահիր,
Գտի՛ր ավելի սուրը և կտրի՛ր վիզը:
Նա կեղտոտ հայն է:

Այս բանաստեղծության մեջ հայը սատանայի որդին է:

Սարսափելի է նաև «Երեքամյա ասկյար»-ի մասին բանաստեղծությունը, որի հեղինակը Զաբիր Նովրուզն է:

Հենց արթնանում է քնից,
Ձենքն է իսկույն վերցնում
Ամեն օր իմ թոռը փոքրիկ,
Մորթում, սպանում է թշնամուն:
Հագնում է զգեստը ասկյարի,
Կրում է գլխարկն ասկյարի,
Որպես իսկական զինվոր,
Զգաստ ու պատրաստ նա կանգնում
Ու հանկարծ ամբողջ ուժով
Նա ուռա է զիլ գոռում,

Եվ անցնում է հաղթանակով,
Շուշիով, Խոջալուով:
Եվ անցնում է մանուկ ասկյարը
Մռովի սարերով,
Ազատ է Քյալբաջարը (Քարվաճառ)
Ֆաշիստներից:
Մարտնչում է փոքրիկ կտրիճը,
Մեծերի փոխարեն է նա մարտնչում.
Պայքարի՛ր, ի՛մ մանուկ,
Գուցե մեծերը քեզ նայելով ամաչեն:
Եվ վաղ թե ուշ, ոչ միայն Ղարաբաղը,
Այլև արյան որջ Երևանը պետք է վերցնել:

«Ադրբեջաներեն» 2-րդ դասարանի դասագրքում հանդիպում ենք.

Ձմեռ պապիին ու Ձյունանուշին
հայերը բաց չթողեցին Քյալբաջար ու Լաչին (Քարվաճառ, Բերձոր),
Իմ երազանքն է, որ Ձմեռ պապը
Ձյունով ծածկի սարերը բոլոր,
Եվ հաջորդ տարին մեզ հյուր կանչի Ղարաբաղ *(Թարգմանությունը ռուսերենից՝ Անժելա Էլիբեգովայի և Հովիկ Ավանեսովի):*

Առաջին հայացքից թվում է՝ Երաժշտության դասագրքում ինչպե՞ս կարող է արտահայտվել հայատյացությունը, բայց արի ու տես, որ ագրեսիայով ներծծված թեմատիկ նյութերն իրենց տեղը գտնում են բոլոր առարկայական ծրագրերում: 8-րդ դասարանի երաժշտության թեմատիկ նյութերից մեկում հանդիպում ենք Միրզա Բայրամովի խոսքով, Ուզեիր Հաջիբեյլիի երաժշտությամբ «Մայրիկի խրատը որդուն» երգին (Ռաջաբով Օ., Քյազիմով Ն., Բաբաևա Ա., Երաժշտություն, դասագիրք, Բաքու, 2017, 96 էջ):

...Դու կտրիճ ես,
Եվ քո անունը տարածվել է բոլոր ծայրերում,
Քեզ արժանապատիվ մայր է ծնել, եղի՛ր արժանավոր որդի,
Ադրբեջանցի կտրիճների լուրը տարածվել է ամբողջ աշխարհում:
Յուրաքանչյուր սարի գագաթին Քյոռօղլիի բերդն է,
Շուտով կմարի արյան ծարավ թշնամու սնապարծությունը:
Դաշտերը կդառնան նրա գերեզմանը,
Ու նրա պղծված շունչը կփչի:
Վերցրու սվինն ու խրիր նրա աչքը, և թող խորտակվի նա արյան մեջ:

44-օրյա պատերազմից հետո Իլհամ Ալիևը բացեց «Հաղթանակի պուրակ», որտեղ ցուցադրության դրվեցին զոհված հայ զինվորների ու զինծառայողների սաղավարտները, շորերը, մեքենաները, ռազմական տեխնիկան, որի վրա՝ ծաղրանքի ենթարկված հայ զինվորների մանեկեններ:

Կեղծիքի, ստի, ատելության, ագրեսիայի, անհանդուրժողականության վրա հիմնված դաստիարակություն, կրթություն և սոցիալականացում են անցնում մատաղ սերունդները, որոնց հոգեկան աշխարհը տրորվում, հարվածներ է ստանում վաղ մանկության տարիքից: Սրանք մարդու իրավունքների խախտման, բռնության ու ահաբեկչության դասական օրինակներ են, որոնք ուրվագծում են այս մարդկանց հասունության պատկերը, ապագան, կանխատեսվող վարքը: Սա 21-րդ դարի ամոթանքն է, որը պետք է կանխվի:

Կեղծարարության, նոր պատմություններ հորինելու մի ամբողջ գիտահետազոտական ինստիտուտ է աշխատում Ադրբեջանում: Գիտությունների ազգային ակադեմիայի վարած քաղաքականությունը տարածվում է կրթագիտական բոլոր օղակների վրա: Այս մասին՝ մեր հետագա հրապարակումներում:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
հ.գ.թ., դոցենտ

Հ.Գ.

Բոլորվին վերջերս Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում կայացել է «Ղարաբաղի խանությունները. պատմամշակութային նույնականացում» խորագրով գրքի շնորհանդեսը: Գիրքը լույս է տեսել քառալեզու թարգմանությամբ: Որպես հովանավոր հանդես է եկել Հեյդար Ալիևի հիմնադրամը, իսկ աջակից՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը: Ադրբեջանի արտգործնախարարության հատուկ հանձնարարություններով ներկայացուցիչ Էլշադ Իսկանդերովը հանդես է եկել «Ղարաբաղի դերը ադրբեջանցիների նույնականացման գործընթացում» հոդվածով: Իսկ գրադարանի տնօրեն Խավյեր Օրտեգա Ալվարեսն իր ելույթում նշել է, որ աշխատությունը կարևոր դեր կունենա Իսպանիայի և Եվրոպայի հանրության մեջ Կովկասի մարգարիտը համարվող Ադրբեջանի մշակութային ժառանգության ամբողջական ընկալման ձևավորման գործում՝ Շուշիի և Ղարաբաղի դարավոր պատմության ընդգրկմամբ:

Փաստորեն Արցախը համարվում է ժամանակակից ադրբեջանական ինքնության գեներացման հիմնական վեկտոր: Արցախը դիտվում է ադրբեջանցիների ազգային ինքնությունը և գաղափարախոսությունը սնող կարևորագույն գործոն: Ինքնության արմատները տասն անգամ փոխած Ադրբեջանի համար Արցախը ազգային գաղափարախոսության և ինքնության ձևավորման միակ կռվանն է:

Հայ պատմաբանների, դիվանագետների և շահագրգիռ բոլոր կառույցների արձագանքը չպետք է ուշանա:

ՉՐՆԱՑՈՂ ԴԱՍԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿՐԿՆՎՈՒՄ Է...

Համացանցում պատահաբար ընթերցեցի Արցախի Մարտունու շրջանի Ննգի գյուղի դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Սաֆարյանի շարադրությունը, որտեղ արցախցի աղջնակը գրում է. «...Այս տողերը ես գրում եմ շրջափակման չգիտեմ որերորդ օրը: Գրում եմ՝ տխուր նստած լուսամուտի մոտ դրված բազմոցին, լուսամուտից ներս թափանցող լույսի ներքո, գրում և սպասում եմ, թե երբ են լույսը տալու, որպեսզի ես և ինձ նման հազարավոր արցախցի երեխաներ կարողանանք պատրաստել դասերը...»:

Սա է իրականությունը, որ կրկնվեց 35 տարի անց: 1988-ին ու դրանից հետո, մինչև պատերազմի հաղթական ավարտը արցախցի հազարավոր մանուկներ, ինչպես նաև՝ Մայր Հայաստանում, նույն վիճակում էին, ինչպիսին այսօր Մարիամն է ու ողջ Արցախի երեխաները: Անցած դարի 90-ականներին էլ թշնամին շրջափակել էր Արցախը, բայց այն ժամանակ հնարավոր էր գոնե օդով Մայր Հայրենիք-Արցախ կապը պահել: Այն ժամանակ էլ խորհրդային բանակի զինվորները, ինչպես այժմ Ռուսաստանի Դաշնության զինվորականներն Արցախում, խաղաղապահի դերում էին, սակայն իրագործեցին «Օղակ» ռազմագործողությունը՝ թիկունք դառնալով թուրքական օմօն-ին: Այն ժամանակ էլ... երկար զուգահեռներ կարելի է բերել: Բայց այն ժամանակ մեր ժողովուրդը միավորված էր, բոլորս մի ուղղությամբ էինք մտածում, գործում՝ ազատագրել Արցախը և միավորել Մայր Հայրենիքին, մաքրել մեր երկիրը թուրքական տարրից, ստեղծել անկախ հայրենիք: Ու հասանք մեր երազանք-նպատակին՝ շնորհիվ միասնության, նվիրումի, հերոսացման: 1992թ. այս օրերին Շուշին դեռ թշնամու ձեռքում էր, 91-ի մայիսի կեսերից դարձյալ «Օղակ» ռազմագործողության հետևանքով գերության մեջ էր նաև Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանը՝ Մեծ շեն, Հին շեն, Եղցահող, Տասը վերստ (Ծաղկաձոր) և Կանաչ թալա գյուղերով: Հայաթափ էին եղել Հադրութի շրջանի մի քանի գյուղեր: 91-ի մայիսի կեսերին Հադրութի շրջանից ու Բերդաձորից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին բերել էին Գորիսի տարածք՝ Տեղ և Խնձորեսկ գյուղերի դաշտերը, թողել բաց երկնքի տակ: Այցելեցի տեղահանվածներին, զրուցեցի նրանց հետ, պատմեցին, թե ինչ անմարդկային եղանակով են «խաղաղապահներն» ու թուրք օմօնականները վերաբերվել իրենց հետ, թալանել ու հասցրել Հայաստանի տարածք՝ ասելով. «Հայաստան էիք ուզում...»: Հանդիպեցի նաև բերդաձորցի տղաների, որոնք մոտ 3 տարի անվտանգ էին պահել իրենց գյուղերը՝ շատերը վերադառնալով իրենց բնակության վայրերից՝ ՀՀ տարբեր մարզ-շրջաններից, Ստեփանակերտից, Ռուսաստանից... Նույն տղաների հետ 1988-1990թթ. նաև ՀՀ-ից ու Արցախի տարբեր շրջաններից, Ստեփանակերտից շատ տղաներ էին պաշտպանում Բերդաձորը, ստեղծվել էր Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ (ԲԻԽ)՝ իր մեջ ընդգրկելով տարբեր ռազմական ջոկատներ, անհատներ: Նույն ԲԻԽ-ի ՀՀ Մարտունու շրջանի ջոկատի կազմում էի նաև ես: Ու լավ եմ հիշում թուրք-«խաղաղապահ» համագործակցությունը, մեր տղաների ձերբակալությունները, սպանությունները: Նույն համագործակցության հետևանքով Բաքվի բանտերում տանջամահ արվեցին ԲԻԽ-ի փոխնախագահ, Բերդաձորի Հին շեն գյուղի բնակիչ, մեծ հայրենասեր Առնո Մկրտչյանը, եղցահողցի Հրաչը՝ Բերդաձորի անկումից հետո: Բայց բերդաձորցի շատ տղաներ, որոնք մինչ իրենց հայրենի երկրամասի անկումը եկել էին ու դարձել հայրենիքի պաշտպան, նորից միավորվեցին, ստեղծեցին ջոկատներ, որ մասնակցեն Շուշիի և հայրենի Բերդաձորի ազատագրմանը: Ջոկատներից մեկի կազմում 1992թ. մարտի 14-ին Երևանից ինքնաթիռով հասանք Ստեփանակերտի օդանավակայան: Մեծ հմտություն ու քաջություն էին դրսևորում մեր օդաչուները՝ օդանավերը վարելով այնպիսի բարձրությամբ ու տեղերով, որ թշնամու կողմից չհրթիռակոծվեն: Այլ էր օդանավակայանում. 88-ի փետրվարից սկսած՝ այստեղ հսկում էին թուրք օմօնականները և «Օղակ» ձեռնարկող «խաղաղապահները»: Ստուգում էին բոլոր ուղևորների փաստաթղթերը, ուղեբեռները, շատ իրեր բռնագրավում էին, ձերբակալում կամ արգելում էին Ստեփանակերտ քաղաք մտնել անցանկալի համարվող անձանց: 1990թ. ամռանը, երբ ՀԱԲ-ի ջոկատներից մեկի 4 ընկերներով՝ ես, Արթուրը, Արսեն-Երեմը և Ստեփանը, պետք է Բերդաձոր հասնեինք, նույն «խաղաղապահ» զինվորները մեզ արգելեցին դուրս գալ օդանավակայանից՝ պահանջելով հետ վերադառնալ Երևան, հակառակ դեպքում կձերբակալեին որպես ահաբեկիչներ: Նրանց համար նույնիսկ արգելված համարվեց Սուրբ Գիրքը, որն իր հետ վերցրել էր Արթուրը: Մեկ շաբաթ անց արդեն ուղղաթիռով հասանք Բերդաձոր և մինչև նոյեմբերի վերջը մնացինք այնտեղ: Ծանոթացանք ու ընկերացանք շատ հայրենասեր տղաների հետ: Եվ նույն տղաներից Շիրակ Չոբանյանի, Գագիկի և այլոց հետ նորից Արցախ մեկնեցի: Մինչ այդ 1992թ. հունվարի 26-ին տեղի էր ունեցել Քարին տակի հերոսամարտը: Չնայած բազմապատիկ անգամ ավելի ուժերին՝ թշնամին տվել էր մեծ կորուստներ ու նահանջել: Իհարկե, Քարին տակի պաշտպաններից 20-ից ավելի քաջորդիներ մարտիրոսվեցին, սակայն անառիկ մնաց հերոսական գյուղը Շուշվա ժայռի տակ: Նահատակ քաջորդիների թվում էին Քարին տակի ջոկատի հրամանատար Վաղարշակ Առուշանյանը, որի որդին՝ Մխիթարը, որ 2020-ին գյուղի համայնքի ղեկավարն էր, նահատակվեց 44-օրյա պատերազմում: Ռուսաստանից հայրենի գյուղ վերադարձած ու ծննդավայրի պաշտպանների շարքերը համալրած Ալյոշա Վարդանյանը, որի նվիրումի ու հերոսացման մասին շատ էին խոսում և կոչում էին Ռեմբո, այդ մարտի ընթացքում նույնպես մարտնչեց հերոսաբար, մարտը շարունակեց նաև ծանր վիրավոր վիճակում և անմահացավ: Զոհվեցին նաև ԲԻԽ-ի անդամներ Նորայրն ու Անուշավանը: Օդանավակայանից մեր ջոկատով հասանք Ստեփանակերտի՝ այն ժամանակ ավտոբազա կոչվող վայրը, որը վերածվել էր ռազմական շտաբի: Այստեղ ներկայացանք գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանին՝ մեր Կոմանդոսին: Որոշվեց, որ տեղակայվելու ենք Ավետարանոց գյուղում՝ պատրաստվելու Շուշվա ազատագրմանը: Գիշերը պետք է մնայինք Ստեփանակերտում, որ առավոտյան շարժվեինք Ավետարանոց: Մի բեռնատար «ՄԱԶ» մեքենայով հասանք քաղաքի ներքևի շրջադարձին, որտեղ փոստի շենքն է: Շուշիի կողմից սկսվեց Ստեփանակերտի ռմբակոծությունը: Մոտ էին պայթում արկերը: Քաղաքի բնակիչները, որ արդեն սովոր էին այս չարիքին, պատսպարվել էին պատերի տակ: Մենք էլ իջանք մեքենայի թափքից ու միացանք բնակիչներին: Մոտ կես ժամ տևեց ռմբակոծությունը՝ իր հետ բերելով ավեր ու նաև զոհեր: Մի քանի հոգով գիշերեցինք Շիրակի քրոջ տանը, որը Հարյուր բնակարաններ կոչվող թաղամասում է: Քրոջ ամուսինը՝ Սերժիկը, գնացել էր մոտակա գյուղերից սնունդ հայթայթելու: Տանը նրանց պատանի որդին էր, որը տխրությամբ պատմեց, որ ոստիկանությունում ծառայող հորեղբայրը նույն ռմբակոծության ժամանակ զոհվել է հերթապահության վայրում: Արդեն մթնել էր, երբ տուն եկավ Սերժիկը, իմացավ եղբոր նահատակության մասին, և միասին գնացինք Ստեփանակերտի կենտրոնը, որտեղ գտնվում էր զոհված ոստիկանի տունը: Գիշերվա մթության մեջ դարձյալ ոռնում էին Շուշիից արձակած ռումբերը, դարձյալ տներ էին ավերվում մեր քաղաքում: Մի քանի հոգի էին հանգուցյալի դիակի մոտ. վտանգավոր էր... Այս շենքի բակում ամիսներ առաջ ռմբակոծությունից զոհվել էր 8 բնակիչ, այդ թվում՝ հանգուցյալի 18-ամյա որդին: Քիչ մնացինք այնտեղ, հետ վերադարձանք. Սերժիկն իր մեջ խեղդում էր վիշտը. պատերազմ է, ռմբակոծություն, ավեր: Ինչ խոսք, դժվար անցկացրինք գիշերը, առավոտյան շուտ հասանք շտաբ և զինվորական «ՈՒՐԱԼ» մեքենայով շարժվեցինք դեպի Ավետարանոց: Հիմնական ճանապարհը տեսանելի էր Շուշիից և մշտապես ռմբակոծվում էր: Այդ պատճառով մեքենան անցնում էր անտառապատ նոր բացված դժվարանց ճանապարհով: Ամեն դեպքում թշնամին նկատեց, ու սկսվեց հրետակոծությունը: Բարեբախտաբար արդեն մտել էինք սարի հետևը: Նույն ճանապարհն ու մեքենան սպասարկում էին նաև տարածքի բնակչությանը: Ապրիլի կեսերին մեքենան շուռ եկավ, եղան զոհեր ու վիրավորներ: Իրիկնամուտին հասանք պատմական Մեծ Հայքի Արցախ աշխարհի Ավետարանոց գյուղը, որը Խամսայի մելիքություններից հզոր Վարանդայի երբեմնի մելիքանիստ-ամրոցն էր՝ Մելիք Շահնազարյանների նստավայրը: Առաջինը, որ աչքի ընկավ, բարձունքի եկեղեցին էր՝ Գայանեի մենաստանը՝ Կուսանաց անապատը: Ավետարանոցում է ծնվել ռուսական բանակի հայազգի զորավար, գեներալ-լեյտենանտ Վալերիան Մադաթովը՝ Ռոստոմ Գրիգորի Մադաթյանը (մայիսի 18 (29), 1782թ., սեպտեմբերի 4 (16), 1829թ., Շումեն, Օսմանյան կայսրություն): Տեղավորվեցինք գյուղի առաջին դպրոցի շենքում, որը մոտ 120 տարվա պատմություն ուներ և այդ ժամանակ ծառայում էր որպես զորանոց ու ապաստարան մոտակա վտանգված բնակավայրերից տեղափոխված երեխաների ու կանանց համար: Այդտեղ էին ապաստանել նաև Ալյոշա Վարդանյանի մայրը, կինը, զավակները: Այստեղ նաև ուրիշ ջոկատների ազատամարտիկներ կային: Ծանոթացանք նաև գյուղի մարտական ջոկատի տղաների հետ: Չնայած պատերազմ էր, բայց դպրոցը գոր-

ԴԻՄԱՆԿԱՐ

ՄԵԾ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՆՐԲԻՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ

Լավ մարդուն պիտի գտնել: Ամեն քայլափոխի չի հանդիպում: Ուղղակի պիտի հայտնաբերել: Նա ունի իր ուրույն հայեցակետը: Իսկ երբ դիմացինդ մանկավարժ է, առավել ևս: Ահա և նրան կրկին հանդիպեցի:

Նաիրա Պողոսյան, ֆիզիկայի լավագույն մասնագետներից մեկը, մանկավարժ՝ բառի լայնահուն իմաստով, լավ մարդ: Նրա դասին գտնվում էի գործի բերումով: Ահա եկավ նա: Եվ հանդարտ ու առանց այլայլման սկսեց վարել դասը: Հիմա դժվար է դասավանդել ֆիզիկա առարկան, միաժամանակ հեշտ, երբ դասավանդողը մասնագետ մանկավարժ է, հին, թրծված մանկավարժ:

Յոթերորդ դասարանում ենք: Միջակ դասարան: Աշակերտների քանակը՝ շատ, որոնց մեծ մասը՝ ժամանակի բերումով անտարբեր ուսման հանդեպ. հետպատերազմյան վիճակ, շրջափակում, հազար կիսատպռատություն տեղահանությունից հետո, նոր պատերազմի վտանգ:

Իր դասը վարում է մեծ վարպետությամբ, կյանքին շաղկապված օրինակներով, մանկավարժական տակտի նուրբ գործածությամբ…

Նաիրա Պողոսյանը ծնվել է 1950թ. փետրվարի 4-ին Մարտունու շրջանի Ճարտար գյուղում (այժմ՝ քաղաք): Ամուսնանալուց հետո կյանքը կապել է Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղի հետ: Աշխատել է որպես ֆիզիկայի ուսուցչուհի, դպրոցի փոխտնօրեն, այնուհետև Ասկերանի շրջկրթբաժնում՝ որպես տեսուչ: Առաջին պատերազմից հետո հանգրվանել է Շուշիում: Աշխատանքի է անցել սկզբում Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, ապա Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջում որպես փոխտնօրեն՝ նաև դասավանդելով տեխնիկական առարկաներ: Առայսօր նա իր դիրքերում է: Դասախոսում է Ստեփանակերտում գործող Շուշիի տեխնոլոգիական համալսարանում: Այս ուսումնականում ըստ պահանջի դարձյալ ֆիզիկա է դասավանդում մեր կրթօջախում:

Պատկառելի տարիքում անգամ նա զգում է կյանքի ռիթմը, վարպետորեն կիրառում դասին ներկայացվող պահանջները: Դասը՝ «ճնշում, ճնշման միավորները», գործնական նշանակություն է ստանում: Աշակերտներն ընկալում են դասանյութը: Ուսուցչուհին բոլորին մասնակից է դարձնում դասին: Դասը հարստանում է բանաձևերի գործնական կիրառության օրինակներով: Իսկ ուսուցչուհին իր բնատուր դերի մեջ ստեղծում է մի գեղեցիկ ներդաշնակություն՝ խոսքի, մասնագիտական ոճի, ձայնի համաչափության, մանկավարժական տակտի: Եվ դասը դառնում է ընկալելի, ամբողջական…

Ն. Պողոսյանը ճանաչված մտավորական «էր» Շուշիում, երկար տարիներ աշխատանքին զուգընթաց ղեկավարել է նաև շրջանի արհմիութենական կոմիտեն, որի ընթացքում ի հայտ են եկել նրա կազմակերպչական կարողությունները: Ակնհայտ են նրա խոսքային նրբին դրսևորումները, կուլտուրան, որով գերում էր իր ունկնդիրներին: Միջոցառումներին խոսում էր ուշագրավ, մտքի խորությամբ: Երբ ելույթ էր ունենում, միանգամից առինքնում էր լսողներին: Եթե գարուն էր, վարակում էր գարնան շնչով, եթե գեղեցկություն՝ գեղեցիկի խոր ընկալմամբ:

Այսօր՝ իր 73-ամյա տարիքում անգամ նրա խոսքն առանձնանում է ասելիքի կարողությամբ, տարողությամբ:

Ն. Պողոսյանը մանկավարժական իր երկարամյա գործունեությամբ ստեղծել է կերպար, որ լիովին իրենն է, պողոսյանական:

Նա հին ու արդար սերնդի վերջին ներկայացուցիչներից է, որով կրթվել ու թրծվել են բազմաթիվ սերունդներ: Նման մարդուն ճանաչելն ուրախություն է, փոխադարձ ընկալումի վայելք, որը շատ է պակասում այս վերջին փոթորկահույզ ժամանակներում:

Հանձին Ն. Պողոսյանի՝ Շուշին ուներ իր հին սերնդի մեծ մտավորականներից մեկին: Նա կյանքին առնչվող անձնավորություն է, որի մեջ ներդաշնակվում են անցյալի ու ներկայի հանգույցները:

Երկու մեծ ուրախություն ունի, իր մոտ ապրող երկու մեծ մխիթարություն՝ իր հետ ապրող երկու թոռները, որոնք արդար մարդու, խոր մտավորականի արտացոլանքն են՝ ուշիմ, խելացի, աչքաբաց, ձգտող, մտածող ու երևացող՝ 11-րդցի Նաիրա թոռնուհին, որ տատիկի գեղեցիկ կրկնակն է և 3-րդ դասարանցի Նանան, որ զարմացնում է իր արագ մտածողությամբ ու ճշգրիտ լուծումներով:

Կյանքի մատուցած անակնկալներից զերծ չմնաց և Ն. Պողոսյանը:

Երկրորդ որդուն կորցնելու մեծագույն վիշտը նա հաղթահարեց իր մեծ սրտով: Ահա թե ինչու են թոռներն իր սփոփանքը:

Թոռների հետ նրբանալով՝ նա շարունակում է մնալ կյանքի ծաղիկը, վարակվում է գարնան շնչով և կյանքի դասեր տալիս նոր սերնդին, որի կարիքը անչափ շատ է զգացվում:

Նաիրա Պողոսյանը նրբաճաշակ մտավորական է, որի սիրտը տրոփում է սերունդների կողքին, սերունդների համար, մարդկային կյանքի ելևէջներում:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

«ԾԻԼ» ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ



Ստեփանակերտում տիկնիկային արվեստի օրը նշանավորվեց առաջնախաղով: Այսօր տիկնիկային արվեստի միջազգային օրն է: Այն տոնելու առաջարկն առաջին անգամ հնչեցվել է դեռևս 2000 թվականին Մագդեբուրգում՝ իրանցի տիկնիկային թատրոնի գործիչ Ջիվա-դա Զոլֆագարիհոյի կողմից:

Ստեփանակերտում գործող «Ծիլ» տիկնիկային ստուդիան, իր որդեգրած արվեստի ճանապարհի սկզբունքներին հավատարիմ, փոքրիկ հանդիսատեսին Արցախի բարբառով ներկայացրեց «Շունն ու կատուն» ներկայացումը (Բեմադրությունը՝ Արմեն Գաբրիելյանի, նկարչական ձևավորումը՝ Իրա Թամրազյանի, երաժշտական ձևավորումը՝ Ծովինար Մարգարյանի):

Ներկայացումը բեմադրել է ստուդիայի ղեկավար՝ Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնի դերասան Արմեն Գաբրիելյանը: Վերջինս մեզ հետ զրույցում նշեց, որ տիկնիկային արվեստը բոլոր ժամանակներում ակտուալ է և փոքրիկների ժամանցի լիիրավ կազմակերպման միջոց լինելուց բացի կրթադաստիարակչական կողմեր ունի:

- Մենք պետք է նպաստենք հայեցի, գրագետ, մարդկային բարձր որակներ ունեցող նոր սերունդ ունենալու գործընթացին: Եվ թատրոնը հրաշալի միջոց է փոքրիկների մեջ հետաքրքրություն սերմանելու, նոր ու կարևոր բաներ սովորեցնելու և լիարժեք արդյունք ունենալու համար,- նշեց Արմեն Գաբրիելյանը՝ ավելացնելով, որ հաճույքով է աշխատում երեխաների հետ. «Ինձ համար այս աշխատանքը նախ և առաջ մեծ պատասխանատվություն է, որովհետև աշխատում ես տարբեր բնավորություններ, խառնվածք ու յուրահատուկ մտածելակերպ ունեցող երեխաների հետ, նրանց տանում գեղագիտական ճաշակի ձևավորման ճանապարհով: Նրանք բոլորն էլ հասկանում են, որ արվեստում, հատկապես տիկնիկային արվեստում անմնացորդ սերն ու նվիրումը պարտադիր պայմաններ են,- եզրափակեց զրուցակիցս:

Վովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿՐԿՆՎՈՒՄ Է…

ծում էր: Խորհրդային Միության ժողովրդական ուսուցիչ, ֆիզիկոս Իվան Աթայանը պատմեց, որ դպրոցում տեղակայված են եղել խորհրդային բանակի զինվորները, և նրանց հեռանալուց հետո սկսել են ուսումնական գործընթացը: Յուրաքանչյուր օր զբաղվում էինք հիմնականում ռազմավարժանքներով ու անհամբեր սպասում հրամանի, որն ուշանում էր: Այդ օրերին մեր զորանոցը եկավ Սպարապետ Վազգեն Սարգսյանը՝ Սերժ Սարգսյանի ուղեկցությամբ: Վստահեցրեց, որ Շուշին մերն է լինելու շուտով ու եղավ…

Այսօր մեծ ցավով եմ հիշում շատ տղաների, ովքեր այդ օրերին Ավետարանոցում էին, մտերմացել էինք, սակայն հետագայում տարբեր մարտադաշտերում նահատակվեցին՝ չտեսնելով երազած հաղթանակը: Բերդաձորի Մեծ շեն գյուղից Կարեն Բաբայանի հետ էինք այցելում դպրոց, ծանոթանում գյուղի տեսարժան վայրերին, պատմական հուշարձաններին, շփվում բնակչության հետ: Անհամբեր էր Կարենը, օր առաջ ազատագրված էր ուզում տեսնել Շուշին ու հայրենի գյուղը: Չտեսավ լիովին ազատագրված Արցախը, ու ռազմի ճամփաներին անմահացավ Կարենը: Գյուղի ազատամարտիկներից Արմեն Բորիսի Առաքելյանը ծննդավայր էր վերադարձել Կապանի Ագարակ բնակավայրից, որտեղ ամուսնացել էր և ուներ դուստր: Ջոհվեց Կուսապատի ազատագրման ժամանակ 1993-ի մարտի 6-ին: Հետագայում Ավետարանոցի ջոկատը մտավ Վարանդայի գումարտակի կազմի մեջ, և Արշավիր Ղարամյանի հրամանատարությամբ այս գումարտակն անցավ հերոսական ճանապարհ: Այդ մարտերում Ավետարանոցի հերոսաբար մարտնչող տղաներից ավելի քան 20 ազատամարտիկներ մարտիրոսվեցին: Նրանց մասին 2009թ. Ստեփանակերտում ԱՀ գրողների միության աջակցությամբ լույս տեսավ իմ հեղինակած «Արծիվներն ամպերի մեջ» գիրքը: Այսպիսին էր այն ժամանակ մեր ազգը՝ միասնական ու պատրաստ կյանքը հայրենի երկրի փրկությանը, ազատագրմանը տալու:

Արցախը հայ ժողովրդի հերթական Սարդարապատն էր: Արցախի ազատագրումով աշխարհը ճանաչեց մեզ ու հարգեց: Արցախի հաղթանակով հպարտ էինք բոլորս՝ գլուխներս բարձր: Այսօր այլ է վիճակը, գերության մեջ է Արցախի մեծ մասը՝ Դիզակ աշխարհն ամբողջությամբ, Վարանդայի կեսը, Գյուլիստանն ու Խաչենի կեսը: Ամենամեծ ցավը՝ Շուշին, կրկին մնաց թշնամու ձեռքին, ու այսօր այնտեղից են փակել մի բուռ մնացած մեր հայրենի Արցախի միակ ճանապարհը: Կրկին միավորվել է պետք, համախմբվել, տեր կանգնել Արցախին, ինչպես արեցինք 1988-1994 թվականներին ու հաղթեցինք: 44-օրյա պատերազմը կործանարար էր, ճիշտ է, բայց ոչ վերջնական: Արցախյան առաջին և վերջին պատերազմներում այլ պատճառներով սահմանում նահատակված մեր հազարավոր քաջորդիները մեզ չեն ների, նրանց հոգիները մշտապես կհետապնդեն ողջերին: Ոտքի կանգնե՛լ, մեջքն ուղղե՛լ է պետք: Մեզ չեն ների նաև մեր երեխաները, որոնց ուսերին շատ մեծ ծանրություն ենք թողնում… Իսկ ննգեցի Մարիամը դեռ սպասում է, թե երբ է բացվելու կյանքի ճանապարհը, երբ են ինքն ու իր հասակակիցները կրկին դպրոց հաճախելու դասերը սերտած: Նա իր խոսքն ավարտել է այսպես. «Ես վստահ եմ, որ հայն ամեն ինչ կհաղթահարի, կպայքարի, կհասնի խաղաղության: Հպարտ եմ, որ հայ եմ, ավելի հպարտ եմ, որ արցախցի եմ, ուրախ եմ, որ իմ տանն եմ: Ոչ մի ադրբեջանցի թող չմտածի, որ մենք կկոտրվենք, մենք ամուր ենք, հզոր ենք մեր սարերի պես…»:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԴԻՄՈՐԴ-2023

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

20 դեկտեմբերի 2022թ. N1306-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
2022 թվականի դեկտեմբերի 20-ի
N306-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.11.6 Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.30.6 Մաթեմատիկա - Ֆիզիկա	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
	011401.32.6 Կենսաբանություն - Քիմիա	Կ(գ)	Ք(գ)		Հլգ(գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031301.00.6	**Հոգեբանություն**				
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ(գ)	Կ(գ)		Օտլ(գ)*
041201.00.6	**Ֆինանսներ**				
	041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)		Օտլ(գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.32.6 Կենսաբանություն - Քիմիա	Կ(գ)	Ք(գ)		Հլգ(գ)*
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
061101.00.6	**Ինֆորմատիկա (*համակարգչային գիտություն*)**				
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*

2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցու-թային
1	2	3	4	5	6
021201.00.6	**Դիզայն**				
	021201.01.6 Դիզայն	Կոմպ	Գծն և Գն		Հլգ(գ)*
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	Կոմպ	Գծն և Գն		Հլգ(գ)*
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
071403.00.6	**Ռադիոտեխնիկա և կապ**				
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**				
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ		Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ)	Կ(գ)		Հլգ(գ)*
084101.00.6	**Անասնաբուժություն**				
	084101.01.6 Անասնաբուժություն	Մ(գ)	Կ(գ)		Հլգ(գ)*

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցու-թային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
071301.00.6	**Էներգետիկա**				
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
073102.00.6	**Քաղաքային տնտեսություն**				
	073102.01.6 Քաղաքային տնտեսություն	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ)	Կ(գ)		Հլգ(գ)*

ԴԻՄՈՐԴ - 2023

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0212.01.5	Դիզայն (հիմնական կրթությամբ)
0411.01.5	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0412.01.5	Ֆինանսներ (հիմնական կրթությամբ)
0612.01.5	Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր (հիմնական կրթությամբ)
0612.04.5	Համակարգերի տեսություն (հիմնական կրթությամբ)
0613.01.5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
0716.17.5	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)
0721.03.5	Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն (հիմնական կրթությամբ)
0721.08.5	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
0731.01.5	Քաղաքաշինական կադաստր (հիմնական կրթությամբ)
0732.01.5	Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում (հիմնական կրթությամբ)
0738.03.5	Ջրամատակարարում և ջրահեռացում (հիմնական կրթությամբ)
0811.02.5	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում (հիմնական կրթությամբ)
0811.07.5	Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)
1041.01.5	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում «ըստ տրանսպորտի տեսակների» (հիմնական կրթությամբ)

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն**	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
031801.00.6	**Միջազգային հարաբերություններ**				
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ**	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ**	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*

3.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն**	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
031801.00.6	**Միջազգային հարաբերություններ**				
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ**	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ**	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0112.01.5	Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)
0114.01.5	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0411.01.5	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0412.01.5	Ֆինանսներ (հիմնական կրթությամբ)
0413.01.5	Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0613.01.5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
0911.01.5	Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
1041.01.5	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

4. «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ (գ)		
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն **	ՀՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*

4.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ (գ)		
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն **	ՀՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ)		Հլգ(գ)*

Օգտագործված հապավումներ

(բ)	բանավոր	ՀՊ	Հայոց պատմություն
(գ)	գրավոր	Հլգ	Հայոց լեզու և գրականություն
Ա	Աշխարհագրություն	Մ	Մաթեմատիկա
Անգլ	Անգլերեն	Մասն.	Մասնագիտական
Գծ	Գծագրություն	ՆԶՊ	Նախնական զինվորական պատրաստություն
Նկ	Նկարչություն	Ռլ	Ռուսաց լեզու
Գն	Գունանկար	Ք	Քիմիա
Գծն	Գծանկար	Օտլ	Օտար լեզու
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն	Ֆ	Ֆիզիկա
Կ	Կենսաբանություն		
Կոմպ	Կոմպոզիցիա		

Ծանոթություններ

Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն) մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

* Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

** Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՔԱՋԱԶՈՒՆՔ

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ

Մեր քաջերը չեն մեռնում, նրանք անմահանում են՝ զոհելով իրենց կյանքը հանուն հայրենիքի ու ժողովրդի: Իրենց պարտքը հայրենիքին պատվով են կատարել ու մարտիրոսվել Արմեն Սարդարյանն ու Անդրանիկ Սարգսյանը:

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Ծնվել է 1992թ. ապրիլի 8-ին Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղում: Հաճախել է Ճանկաթաղի միջնակարգ դպրոցը: 2010-2012թթ. ծառայել է ԱՀ ՊԲ-ում՝ Մարտունիում: Արմեն Սարդարյանը մասնակցել է 2016 թվականի քառօրյա պատերազմին: Արժանացել է «Մարտական ծառայություն» մեդալի: Սովորել է Երևանի «Մխիթարյան միաբանություն» ճեմարանում՝ որպես հոգեւորական: 2016թ. հոկտեմբերին ամուսնացել է, ունի երեխաներ: Որպես ընտանիքի գլուխ՝ Արմենը շատ նպատակներ ուներ: Երրորդ երեխան ծնվել է 2020թ. սեպտեմբերի 7-ին: Երեխան քսան օրական էր, երբ սկսվեց 44-օրյա պատերազմը:

Սեպտեմբերի 27-ին առավոտյան Արմենը գնաց պատերազմ: Սկզբում մասնակցում էր մեկ դիրքի պաշտպանական գործողություններին, իսկ 16 օր հետո մտավ Վլադիմիր Բալայանի անվան աշխարհազորային ջոկատը: Տեղափոխվեց Կարմիր շուկայի պաշտպանական դիրքեր, մասնակցեց թեժ մարտերի: Նրանց ջոկատում տարբեր տեղերից մարդիկ կային, նաեւ՝ Ճանկաթաղից:

Մայրը՝ Զեմֆիրա Աբրահամյանը, պատմում է, որ Արմենն ամեն օր խոսում էր երեխաների հետ: Կնոջը խնդրում էր, որ փոքրիկին լացացնի, որպեսզի հեռախոսով լսի նրա ձայնը: Մի օր զանգեց ու ասաց, որ մեծ երեխաները՝ Նարեկն ու Աննան, կնքված են, թող անպայման փոքրիկին՝ Հովսեփին էլ կնքեն: Ասացին, որ իհարկե կկնքեն միասին, երբ ինքը վերադառնա: Բայց Արմենը պատասխանեց, որ կարող է չգա, թեժ մարտեր են…, թող անպայման կնքեն:

Արմեն Սարդարյանը զոհվեց թշնամու մահաբեր բայրաքթարի հարվածից նոյեմբերի 1-ին, հերթափոխի ժամանակ՝ Կարմիր շուկան պաշտպանելիս: Նրա հետ մեկտեղ զոհվեցին զինակից ընկերները:

Հետմահու պարգեւատրվել է «Արիության մեդալ»-ով:

Արմեն Սարդարյանը աշխատասեր, հավատքով լեցուն անձնավորություն էր, հայրենիքի նվիրյալ զավակ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1966թ. Քարին տակ գյուղում: Ավարտել է Քարին տակի դպրոցը: Ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում: Բանակից վերադարձել է սերժանտի կոչումով: Կատարել է տարբեր աշխատանքներ, ծառայել ուժային ու անվտանգության կառույցներում: Արցախյան առաջին պատերազմի ակտիվ մասնակիցներից է, ճանաչվել է իր խիզախ լինելու ու սխրագործություններ կատարելու շնորհիվ: 1990-ականների գոյապայքարի ժամանակ իրեն դրսեւորել է որպես քաջ ազատամարտիկ: Վաղարշակ Առուշանյանի, իսկ այնուհետեւ՝ Արթուր Առաքելյանի հրամանատարությամբ կազմավորված ինքնապաշտպանական ջոկատում մասնակցել է Քարին տակի, Մարտակերտի պաշտպանության համար մղված մարտերին, եղել առաջնագծում: Պարգեւատրվել է մեդալներով:

Պատմում են, որ անվախ էր, ոչնչից չէր վախենում: Երբ լսեց, որ զինակից 11 ազա-

տամարտիկները պայթել են ականի վրա, մենակ նետվեց նրանց հանելու: Այդ ընթացքում ինքնաձիգը ցած էր դրել, որ կարողանա տղաներին հանել: Վերադարձել ու ինքնաձիգը նույն տեղում չէր գտել: Բայց մարտերը շարունակվում էին: Նա գնաց մարտի առանց ինքնաձիգի, կատարեց մարտական խնդիրը, վերադարձավ թշնամու հետ մարտնչելու ընթացքում ձեռք բերած ինքնաձիգով:

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ զոհվեց նրա ընկերը՝ Գարիկ Առաքելյանը, որի հետ միասին էին մարտնչում թշնամու դեմ: Ինքը՝ Անդրանիկը, կռվում էր ինքնաձիգով: Գարիկն աշխատում էր նռնականետով, երբ ընկավ թշնամու հարվածից: Անդրանիկի համար շատ ծանր էր ընկերոջ կորուստը, բայց նա չկորցրեց իրեն եւ հանձն առավ կանգնել նռնականետի մոտ ու աշխատել: Նա կարողացավ վնասազերծել իրենց վրա գրոհող թշնամու տանկը: Երբ թեժ մարտն ավարտվեց, զինակից ընկերներն ասացին. «Տեսնո՞ւմ ես ինչ է անում նռնականետը», իսկ նա պատասխանեց. «Իսկապես, լավ բան է նռնականետը, առաջին անգամ եմ դրանով աշխատել»:

Ամուսնացել է 1986 թվականին: Կինը՝ Գոհար Գրիգորյանը, պատմում է, որ համատեղ ամուսնական կյանքում երջանիկ են եղել, ապրել են իրար սիրելով, հարգելով ու հասկանալով: Շատերին թվում էր, թե նրանք քույր ու եղբայր են, այնքան էին մտերիմ ու հարազատ: Անդրանիկը հայրենիքին նվիրված անձնավորություն էր: Նրանց կյանքում դեպքեր են եղել, որոնց ժամանակ Անդրանիկը գերադասել է հայրենիքի կողքին լինել՝ զոհաբերելով անձնականը: Չորս զավակների ծնողներ Անդրանիկն ու Գոհարը միասին շատ դժվարություններ են հաղթահարել: Սիրելի ամուսնու կորստի հետ չհամակերպվող Գոհարը մեզ հետ կիսվում է հիշողություններով ու պատմում, որ 1993թ., երբ ծնվեց նրանց երրորդ երեխան, Անդրանիկը կողքին չէր, Քարվաճառում կռվում էր թշնամու դեմ: Ունենալով քաջ ու անվախ ամուսին՝ Գոհարն էլ ձեռք էր բերել ուժեղ հատկանիշներ. չէր տրտնջում, չէր կոտրվում, անհրաժեշտության պահերին ինքն էր թեւ ու թիկունք դառնում ամուսնու համար:

Տարիներ առաջ նրանց ընտանիքը Քարին տակից տեղափոխվեց Շուշի՝ ունենալով իրենց բնակարանը: 2020թ. 44-օրյա պատերազմն սկսվելուց մի քանի օր առաջ Գոհար Գրիգորյանը խոսակցություններ էր լսել հարեւաններից հնարավոր պատերազմ լինելու մասին: Երբ մտահոգությունը հայտնել է ամուսնուն, վերջինս հանգստացրել է նրան ու հորդորել չհավատալ, վստահեցրել, որ նույնիսկ պատերազմ լինելու դեպքում էլ պատրաստ են պաշտպանել: Զինվորական պարտքը հայրենիքին մատուցելու ծառայությունն ավարտած ու թոշակի անցած ամուսինն աշխատում էր որպես տաքսու վարորդ:

- Սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան ձայներ լսեցի, վեր կացա՝ կարծելով թե հարեւաններն են վերանորոգման աշխատանքներ կատարում: Անդրանիկն էլ վեր կացավ: Պարզ դարձավ, որ ամենեւին էլ վերանորոգման ձայներ չեն: Արթնացրի բոլորին, թոռներիս, հարեւաններիս: Գնացինք ապաստարան: Օրեցօր թեժանում էր պատերազմը, Շուշին ռմբակոծվում էր ինտենսիվորեն: Ապաստարանում մնալ չէի կարողանում: Մնում էի տանը, ճաշ պատրաստում: Երկու որդիներս դիրքերում էին:

Ծանր օրերից էր հոկտեմբերի 4-ը: Շուշիի մշակույթի տունը հրթիռակոծվեց՝ տալով բազմաթիվ վիրավորներ: Ամուսինս մղվեց օգնելու: Ինքնավստահ էր ու համարձակ: Ամենուրեք պայթող արկեր էին, ռմբակոծվում էր Շուշին եւ ոչ միայն: Բայց նա վախ չուներ: Ավտոմեքենայով վիրավորներին մի քանի անգամ արագ տեղափոխեց Ստեփանակերտի հիվանդանոց ու հետ եկավ՝ փրկելով 9 մարդու կյանք: Զինվոր, ոստիկան, քաղաքացի խառնվել էին իրար: Մի քանի հոգու էլ բերել էր մեր տուն: Նրա համարձակությունից ու քաջությունից ներշնչված՝ ես էլ իմ հերթին էի ուզում օգնել ու հուսադրել շրջապատիս մարդկանց: Սնունդ էի պատրաստում, առաջին օգնության պարագաներ, որպեսզի օգնեի՝ ինչով կարող էի: Մեր տուն եկած տղամարդկանց մեջ երիտասարդ կար, երեւում էր, որ շատ էր ընկճված: Մոտեցա եւ հուսադրող խոսքեր ասելով ձեռքս դրեցի ուսին, որ ամեն ինչ լավ է լինելու: Ցավից տնքաց, պարզվեց, որ վիրավոր է ձեռքից: Հարցրի՝ ինչո՞ւ չգնաց հիվանդանոց, պատասխանեց, որ ծանր վիրավորները լիքն են, ավելի լավ է բժիշկները նրանցով զբաղվեն: Ամուսինս ասաց, որ պետք է լվանա ավտոմեքենան: Սկզբում զարմացա, թե ի՞նչ լվանալու ժամանակ է, բայց… Մեքենան ծանր վիրավորներ տեղափոխելիս կորել էր արյան մեջ Ահավոր էր:

Հայրենիքին ու հայրենակիցներին պատուհասած վտանգի դեպքում Անդրանիկ Սարգսյանը չէր կարող անտարբեր մնալ: Աշխարհազորի կազմում գնաց դիրքեր՝ իր մարտական փորձն ու հմտությունները ներդնելու հայրենիքի պաշտպանությանը: Եղավ տարբեր կետերում: Հոկտեմբերի կեսերին կնոջն էլ հորդորեց, որ ժամանակավոր դուրս գան դեպի Հայաստան: «Հրաժեշտի պահին գրկեցի նրան: Ասաց, որ երկար չի տեւի, մի քանի օրից կվերադառնան: Ոչ մեկս չէինք պատկերացնում, որ դա կլինի մեր վերջին հրաժեշտը»,- պատմում է Գոհարը:

- Երբ ստացվում էր հեռախոսով խոսել, կարճ էր խոսում: «Սարգսյանը լսում է, ամեն ինչ լավ է»,- այդպես էր պատասխանում: Նրա հուսադրող խոսքերից գոտեպնդվում էի, ոչնչից չէի վախենում, բոլորին հույս էի տալիս, քաջալերում: Երբեք չեմ մտածել, որ նրա պես մարտական ուղի անցած ուժեղ, խիզախ տղամարդը կարող է զոհվել: Գիտեի, որ մեր գյուղի ժայռի գլխին են դիրքավորվել: Աշխատում էր գնդացրի վրա: Նրա կատարած սխրագործությունները շատ են, բայց թվարկել չի լինի հայտնի պատճառներով: Նոյեմբերի 4-ին զոհվեց դիպուկահար ոսոխի գնդակից: Իմացողները չէին համարձակվում հայտնել ինձ գույժը: Մի քանի օր անց հարսս ասում է. «Դու ուժեղ ես, ուժեղ եղիր»: Եղբայրս ու բարեկամներս զանգում էին, բայց հասկանալով, որ դեռ չգիտեմ, չէին խոսում: Չէի հասկանում, չէի հավատում, չէի կարող ընդունել: Երբ արդեն հասկացա, ուշաթափվեցի…

Նոյեմբերի 13-ին որդիներիս ջանքերով ստացվեց հանել մեր հարազատի մարմինը մեզ հարազատ, բայց արդեն մեզ չպատկանող Շուշի-Քարին տակից: Նրա հետ միասին դուրս բերվեց նաեւ ընկերոջ՝ Արմո Մադաթյանի դին: Նոյեմբերի 17-ին նրանք հուղարկավորվեցին Եռաբլուրում:

Տեղափոխվեցինք Ստեփանակերտ: Ապրում ենք պետության կողմից տրամադրված բնակարանում: Անդրանիկը հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Մինչեւ այսօր էլ չեմ կարողանում համակերպվել նրա բացակայության հետ: Անդրանիկն իմ հերոսն է, ինձ հետ միասին՝ նաեւ բոլոր արցախցիների: Իր կատարած հայրենանվեր գործերի համար նա արժանի է Արցախի հերոս կոչվելուն:

Նրանք տվեցին ամենաթանկը՝ կյանքը, հայրենիքի համար, իսկ պատիվը թողեցին իրենց: Պատի՛վ ու փա՛ռք մեր հերոսներին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Խոսք հիշատակի

ՎԱԼԵՆՏԻՆԱ ՈՍԿԱՆՅԱՆ

Վալենտինա Ոսկանյանը ԱՀ Մարտակերտի շրջանի Դրմբոնի Վ. Ջալալյանի անվան միջնակարգ դպրոցում աշխատում էր 2004 թվականից: Դպրոցում մանկավարժական գործունեության 19 տարիների ընթացքում ցուցաբերել է մեծ նվիրվածություն իր աշխատանքի հանդեպ և լուրջ պահանջկոտություն ուսումնադաստիարակչական աշխատանքում:

Վալենտինա Ոսկանյանը ծնվել է 1963թ. Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղում: 1981թ. ավարտելով միջնակարգը՝ ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա» բաժինը և ավարտել 1986թ.:

Վ. Ոսկանյանը մեծ սեր ուներ իր ընտրած մասնագիտության հանդեպ: Նա դպրոցում 19 տարի շարունակ մնաց սիրված ու հարգված դասվար իր աշակերտների համար:

Ունենալով մանկավարժական քնքուշ տակտ՝ կարողանում էր սաների հոգու մեջ ներարկել ազնվություն, բարություն և հայրենասիրական վեհ գաղափարներ ու զգացումներ:

Վ. Ոսկանյանը դպրոցի տարրականի մեթոդմիավորման նախագահն էր, կոլեկտիվի գործունյա և ակտիվ անդամ, ներդպրոցական աշխատանքների հմուտ կազմակերպիչ, անմնացորդ նվիրված սերունդների դաստիրարակության ու կրթության վեհ գործին:

Մենք անչափ ուրախ էինք, որ մեր կողքին ունենք նման անձնավորություն և մանկավարժ:

Միշտ կոկիկ էր ու հարդարված, ուներ պատասխանատվության մեծ զգացում, խստապահանջ էր, բայց և մայրաբար բարի, հոգատար և ներողամիտ իր սաների հանդեպ:

Գերազանց մայր, հոգատար կին և սիրելի տատիկ: Վ. Ոսկանյանը նաև վստահելի ու խորհրդատու անձնավորություն էր:

Չարաբաստիկ և անբուժելի հիվանդությունը հայտնվեց ամիսներ առաջ: Վ. Ոսկանյանը նման առողջական պայմաններում կարողացավ պահպանել կապը սաների և մանկավարժական կոլեկտիվի անդամների հետ: Սրտանց ուրախանում էր բոլորի հաջողություններով:

Նրա սաները սպասում էին սիրելի ուսուցչուհու վերադարձին: Ավա՜ղ, չիրականացան նրանց սպասումները:

Սիրելի ուսուցչուհու կյանքի թելը կտրվեց սույն թվականի փետրվարի 26-ին՝ գարնանամուտին:

Նորից գարուն է բացվել, մեր կյանքի հերթական գարունը, նորից բնությունը զարթոնքի մեջ է: Նորից հնչում է դպրոցական զանգը, ուսուցչուհիները դասամատյաններով շտապում են դասարաններ, կարծես ոչինչ չի փոխվել, ամեն ինչ նույնն է, չկաս միայն դու, սիրելի՛ ընկեր Ոսկանյան:

Քո անունն ու բարի հիշատակը բարձր կպահվի քո երկու զավակների, չորս թոռների, սիրելի սաների, քեզ ճանաչողների և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ամենանվիրական հուշերում:

Դրմբոնի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀՈԳԵՎՈՐ

ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՏԻԿ



Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնը, որը նաև Զատիկ է անվանվում, Եկեղեցու մեծագույն տոներից է, Աստվածորդու տնօրինական առաքելության և մարդու փրկագործության նախախնամ խորհրդի արտահայտումը: Այն շարժական տոն է և այս տարի տոնվում և ապրիլի 9-ին:

Քրիստոսի հարությունը մանրամասնորեն նկարագրվում է Ավետարաններում(Մատթեոս ԻԸ 1-8, Մարկոս ԺԶ 1-8, Ղուկաս ԻԴ 1-12, Հովհաննես Ի 1-10): Համառոտ ներկայացնենք այն:

Հիսուս Քրիստոսի խաչելությունից և մահից հետո երեկոյան բարեպաշտ մարդիկ Նրա մարմինն իջեցրին խաչից և դրեցին վիմափոր գերեզմանի մեջ, որի մուտքը փակեցին մի մեծ քարով:

Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը և Սողոմեն, գնացին գերեզմանը խնկարկելու, բայց զարմանքով տեսան, որ քարայրի մուտքից քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսանքով ու զարմանքով այս ու այն կողմ էին նայում, երևում են երկու հրեշտակներ՝ լուսավոր զգեստներով, և ասում. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ»(Ղուկ. ԻԴ 4-9):

Հարության լուրը կանայք ավետում են առաքյալներին, որից հետո Հիսուսը երևում է նրանց: Ինչպես վկայում է Պողոս առաքյալը, Հիսուսին տեսնում է ավելի քան հինգ հարյուր հոգի:

Ահա հերթական անգամ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի չարչարանքների, խաչելության ու հաղթական հարության սրբազան տոնը: Մեկ անգամ էլ հավատացյալ քրիստոնյաներն իրար ավետում են. «Քրիստոս Հարյավ ի մեռելոց»:

Աստված՝ որպես սիրող Հայր, մարդուն ստեղծեց նրա հետ հոր և որդու խանդակաթ ու մտերմիկ հարաբերություններ ունենալու համար: Իր պատկերով ու նմանությամբ ստեղծեց նրան, որպես անբիծ ու մաքուր արարած: Օրվա որոշ ժամերին գալիս էր դրախտ՝ իր որդիների սիրալիր ընկերակցությունը վայելելու: Սակայն մարդը, դժբախտաբար, Աստվածային պատվիրանին անհնազանդ գտնվելով, մեղանչեց և զրկվեց Աստծո հետ ունեցած այդ սիրալիր հարաբերությունից: Ադամի մեղանչումով իրեն Աստծո հետ կապող հաղորդակցության թելը կտրվեց: Հանցավոր մարդը արդար ու կատարյալ Արարչի ներկայությունից թաքնվեց, Նրա սուրբ կամքից հեռացավ: Արդարության ճանապարհներից մոլորվեց և հետզհետե անհույս ընկղմվեց մեղքի ու ապականության տիղմի մեջ: Կարծես թե չարը հաղթեց և Արարչի ծրագիրը ձախողվեց: Աստված՝ որպես Արարիչ և մարդու գոյության նախապատճառ, չէր կարող հանգիստ նայել ընկած մարդուն: Պետք էր մարդու փրկության և նրա հետ սիրալիր հարաբերությունն ու ընկերակցությունը վերականգնելու համար միջոցներ և ճանապարհներ փնտրել և գտնել: Բավականին երկար ժամանակ Նա ուղարկեց աստվածավախ ու բարեպաշտ առաջնորդներ և մարգարեներ, պատվիրաններն ու օրենքները տվեց՝ իբրև կյանքի ուղեցույց, որ ժողովուրդը լսի նրանց, ապրի իրենց փոխանցվող պատվիրանների համաձայն և վերադառնա Աստծո հետ որդիական հարաբերությանն ու հավիտենական կյանք ունենա: Այս ճանապարհով չստացվեց մարդուն վերադարձնել և ճշմարիտ ճանապարհին դնել, և Աստված, իր անհուն սիրուց մղված, որոշեց մարմնանալ, մարդանալ, մարդկային սերնդի հետ նույնանալ, մինչև անգամ իր ստեղծած մարդ էակի փոխարեն մահանալ և իր մահվամբ մեղավոր ու կորսված մարդկությանը հավիտենական կորստից փրկել: Այս է աստվածաբանության առանցքը, այս է քրիստոնեական կրոնի և եկեղեցու հիմքը, ավետարանների և առաքյալների քարոզությունն ու ուսուցումը:

Իր գործունեության, ծառայության ու քարոզության ժամանակահատվածում Հիսուս Քրիստոսը բժշկեց ժողովրդի մեջ եղած զանազան ցավերն ու հիվանդությունները, բացեց կույրերի աչքերն ու խուլերի ականջները, բորոտներին ու անդամալույծներին ազատեց իրենց բազմամյա տառապանքներից, հազարավոր անոթիների կերակրեց, մինչև իսկ մահացածներին կենդանացրեց: Այս ամենը տեսնելով՝ մարդկանց հոծ բազմություններ սկսեցին հետևել Նրան և բազմահազար մարդիկ Աստծուն փառավորեցին: Բոլորը տեսնում և ճանաչում էին, որ Նա կյանքի ու մահվան տերն է, մարդացյալ Աստվածը: Ամբողջ Իսրայելում տարածվեց Նրա փառքը, շատերը հիացան երիտասարդ Վարդապետի ուսմունքով, հոգևոր ու հավիտենական ճշմարտությունները վերլուծելու և բացատրելու Նրա կարողությամբ: Հասարակ ժողովուրդը, ինչպես նաև բարձր դասին պատկանողներից շատերը համոզված էին, որ Նա Աստծուց եկած վարդապետ էր, որ Աստված նրա հետ էր, քանի որ ոչ մեկը չէր կարող այն զարմանահրաշ գործերն ու հրաշքները կատարել, որ Նա էր կատարում, եթե Աստված նրա հետ չլիներ:

Հակառակ այս ամենին՝ Իսրայելի իշխանական ու եկեղեցական դասակարգը նախանձով ու ատելությամբ լցվեց Նրա հանդեպ և սկսեց հալածել Նրան: Քանի դեռ Հիսուսն ազատ շրջում և անարգել գործում էր Իսրայելում, օրհնաբեր հրաշագործություններ էր կատարում, շարունակում էր իր ժողովրդանվեր ծառայությունը և վայելում ընդհանուրի հարգանքը, հիացումը, նվիրումն ու սերը, նրանք չէին կարող հանգիստ զգալ իրենց դիրքում: Վրդովված էին նույնիսկ նրանց ուտելն ու խմելը, գիշերվա հանգիստն ու քունը: Հիսուսի ներկայությունը փուշ էր դարձել նրանց աչքերում և երկայրի սուր՝ նրանց սրտերում: Պետք էր Նրան մեջտեղից վերացնել՝ իրենց եսասեր ու շահամոլ կյանքը ապրել կարենալու համար: Նրա արդար ու կատարյալ կյանքը ծանր հանդիմանություն էր դարձել իրենց հանցավոր ու մեղանչական կյանքի հանդեպ: Նրանք երկու ճանապարհ ունեին. կամ ընդունել իրենց սխալներն ու Նրա աստվածային առաքելությունը, երկնային հեղինակությունը, խոնարհվել Նրա առջև և դառնալ Նրա գործակիցները, կամ մերժել, հակառակվել և հալածել Նրան մինչև մահվամբ մեջտեղից վերացնելը: Սակայն նախանձն այնքան էր բթացրել նրանց ուղեղը, որ չհասկացան, որ կյանքի ու մահվան վրա իշխանություն ունեցող Վարդապետը չի կարող սովորական մահկանացուի նման մեռնել, այն էլ՝ խաչի անարգ մահով: Եվ ահա մի քանի ձևական հարցաքննությունից հետո իրականացրին իրենց կեղտոտ վճիռը՝ խաչափայտին գամեցին ու սպանեցին Կյանքի ու մահվան Տիրոջը, տիեզերքի Արարչին: Դժոխքը, դևերն ու սատանան ցնծագին պար բռնեցին: Նրանց թվում էր՝ հերթական անգամ ձախողել են Արարչի ծրագիրը: Հիսուսի աշակերտներն ու հետևորդներն էլ սարսափահար էին եղել՝ տեսնելով իրենց Վարդապետի կրած չարչարանքներն ու մահը: Մարդկայնորեն դատելով՝ ամեն ինչ վերջացած էր: Աշակերտները հուսահատված էին, որովհետև դարերի փորձառությունը ցույց էր տալիս, որ գերեզմանը կյանքի վերջն է, գերեզմանից դեռ ոչ ոք չի վերադարձել: Քրիստոսի թշնամիները մտածում էին, որ իրենք հաղթեցին, մեջտեղից վերացրին ազգի «խռովարար»-ին:

Սակայն չարի ու մեղքի հաջողության ճանապարհը միայն մինչև գերեզման կարող է հասնել: Մահը վերջ է դնում բոլոր մարդկային անօրենություններին ու անիրավություններին: Գերեզմանից այն կողմ նրանք ոչ մի կարողություն և իշխանություն չունեն, անզոր են: Գերեզմանը չէր կարող Աստվածորդուն կաշկանդված ու գերի պահել: Եվ ահա ընդամենը երեք օրից «պարտված» Հիսուսը Հարություն առավ: Մահվան կապանքները փշրեց, գերեզմանի ուժը ջախջախեց և նրա տիրապետությունը խորտակեց: Հիսուսը մահվանից հարություն առավ՝ ցույց տալով մարդկանց, որ մահը կյանքի վերջը չէ, որ չարը չի կարող վերջնական հաղթանակ տանել, որ արդարությունը և ճշմարտությունը միշտ հաղթանակում են: Որ թշնամությունը, նախանձն ու ատելությունը մինչև գերեզման միայն կարող են հասնել: Միայն արդարությունը, սրբությունը, հավատքն ու սերն են հավերժական: Քրիստոս հարություն առավ որպես Հույս՝ անհույսին, որպես Փրկիչ՝ մեղավոր ու կորսված մարդկության համար:

Քրիստոսը ցույց տվեց, որ մահվանից հետո կյանքը շարունակվում է:

Շուրջ երկու հազար տարիներ ի վեր այս հավիտենական ճշմարտությունն է ընկած քրիստոնեական վարդապետության առանցքում և եկեղեցու հիմքում՝ կա հավիտենական կյանք:

Քրիստոսի Հարությունը աշխարհի մեծագույն իրադարձությունն է. Քրիստոս հաղթեց մահվանը և գերեզմանին, կատարվեց մարդու փրկագործությունը: Աստծու Որդու՝ խաչի վրա մահվամբ և հարությամբ մարդը վերստին հավիտենական կյանք ունենալու իր կոչմանն արժանացավ:

Հիսուս Քրիստոսի հարության ավետիսը այսօր էլ նույն հուսադրիչ և կենսատու լուրն է, որ տարածվում է երերուն ու անկայուն, պատերազմներով ու դառնություններով լի աշխարհի չորս կողմերում.

-Քրիստոս Հարյավ ի մեռելոց:

ԶԱՏԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զատիկը հայ ժողովրդի սիրելի տոներից է: Տոնակատարությունն սկսվում է շաբաթ երեկոյան՝ Ճրագալույցի սուրբ պատարագով, որից հետո ժողովուրդը Քրիստոսի Հարության լույսն ու ավետիսը վառված մոմերով տանում է տուն: Այդ օրը Պատարագից հետո պահքը լուծարվում է: Տոնական ընթրիքի սեղան են դնում, որի պարտադիր կերակրատեսակներն են չամիչով փլավն ու ձուկը:

Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, անդաստանի կարգ, Սուրբ պատարագ:

Զատկի օրը հավատացյալները հավկիթ են ներկում և տանում եկեղեցի՝ օրհնելու: Հավկիթը համարվում է հարության և նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ: Իսկ կարմիր գույնը, որով ներկում ենք հավկիթը, խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Այսօր ժողովրդի մեջ սովորություն կա խայտաբղետ գույներով ներկել զատկական հավկիթները, սակայն Զատկին հավկիթը պետք է ներկել միայն կարմիր՝ որպես Քրիստոսի արյան խորհրդանիշ: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Միայն Զատիկին ենք ձու ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի և, ինչպես իմաստուններն են ասում, դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը ... գնվեց Քրիստոսի արյամբ: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»:

Այդ օրը երիտասարդներն ու երեխաները ներկված ձվերով կազմակերպում են նաև ձվախաղեր:

Զատիկին հավատացյալ ժողովուրդը նաև ցորեն է աճեցնում՝ նորից որպես նոր կյանքի և զարթոնքի խորհրդանիշ:

Թող Քրիստոսի Հարության լույսը լուսավորի ամենքիս, ազգովի դառնանք մեր քրիստոնեական ակունքներին, վերագտնենք Արարիչ Աստծո հետ մեր որդիական կապն ու մնանք Աստծո հետ այն սիրալիր ու բարի հարաբերությունների մեջ, որի համար ստեղծվել ենք:

Աստված է, տեսնելով մեր որդիական նվիրումը, սերն ու խոնարհումը, մեր ճանապարհից հեռացնի թշնամությունն ու ատելությունը, նախանձն ու անարդարությունը: Աղոթենք, որ Աստված մեզ էլ հարություն տա մեր այս հոգևոր թմբիրից, զորացնի և իմաստություն տա, որպեսզի կարողանանք ատել մեղքն ու սիրել արդարությունը, միշտ քայլել Աստծո ճշմարիտ ճանապարհներով և ապրել աստվածահաճո կյանքով:

Քրիստոս հարյավ, «Որպեսզի ով որ Նրան հավատա, չկորսվի, այլ հավիտենական կյանք ունենա»ե: Երանելի են բոլոր նրանք, ովքեր այս գիտակցությամբ ու հավատքով են նշում Հիսուս Քրիստոսի հաղթական Հարության սրբազան տոնը:

Շնորհավոր Սուրբ Զատիկ:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի:

Արթուր կսրկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Արցախի թեմի ՔԴՔԿ փոխտնօրեն

ԳՐԱԿԱՆ

«ՀԱՅԱՑՔ ՁՄԵՌՆԱՄՈՒՏԻ»

Լրացավ բանաստեղծ, հրապարակախոս, Արցախում՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի սեփական թղթակից ***Դավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ*** *ծննդյան 70-ամյակը: Ընթերցողներին ենք ներկայացնում բանաստեղծությունների մի շարք հեղինակի՝ տպագրության պատրաստած «Հայացք ձմեռնամուտի» ժողովածուից:*

ԲՈՒՔԸ ՈՌՆՈՒՄ Է

Կեղևդ բաց արա, ծա՛ռ,
Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ...

Ռ. Դավոյան

Հողմը խուժեց մեկեն,
Ցրտերը եկան կրկին,
Քուն չի գալիս անգամ նորածնի աչքին,
Մղձավանջից
Զարթնել է ժողովուրդն իմ զարկված.
Խավարի մեջ
Լույս է որոնում կրկին...
Այս էլ՝ քանի՜երորդ անգամ
Գազանացած ու նենգ
Կրակեցին վերից նրա խոցված վերքին:

Բավ չեղա՞վ դավել,
Կեղեքել, ստել,
Անմեղ արյուն են դարձյալ ուզում հեղել...
Այսքան դաժանություն երբեք չենք տեսել,
Աստված իմ,
Ախր քեզ ի՞նչ է եղել...
Հավատա,
«Տերը» մերկ է էն գլխից,
Եվ զուր ես նրան մեզ մատաղ տալիս...
Տե՛ս,
Թշնամին է ոռնում գայլի պես՝
Զոհասեղանին
Նոր զոհ տեսնելու տենդով հղփացած,
Ու ժանիքներին յաթաղանից էլ սուր,
Արյան շիթերը դեռ չեն չորացել...
Սթափվի՛ր, աշխա՛րհ,
Ուշքի՛ եկ, Աստվա՛ծ:
Թե զղջաս հետո՝ շատ ուշ կլինի:
Իսկ այսօր ահա,
Նոր գորշ ամպեր են տանիքիս նստել,
Ու բարուրի մեջ
Նորածին մանչն իմ չի ուզում քնել...
Հողմը խուժեց մեկեն,
Ցրտերը սաստկացան,
Հայաստա՛ն,
Ա՛ռ ինձ քո տաք կեղևի մեջ,
Բուքը ոռնում է...

ԱՇՆԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

Իրիկնային դժոխքից
Դեռ քաղաքն իմ չէր սթափվել
Ու մինչ երկինքը
Հուսո աստղեր կմաղեր ծխացող տներին
Եվ մղձավանջի միջից
Կթարթեր աչքերն իր ամպամած,
Կրկին պայթեց արկը վայրագ թշնամու:
Աշնան վերջին գիշերը դողաց,
Ու ցավից
Մերկացան աշնան ծառերը...
Ձմեռ է գալիս,
Սոսկալի ձմեռ,
Գոտեպնդվի՛ր ու տոկա՛, Արցա՛խ երկիր...

ԿԱՐՄԻՐ ՁԻԱՎՈՐԸ ԴԻԶԱԿԸ ԿՓՐԿԻ...

Ես մեղավոր չեմ,
Որ սիրահարված եմ Դիզակ աշխարհին
Եվ կորստի ցավից
Կորցրել եմ գլուխս,
Հանգիստս, քունս...
Ի՜նչ չար կատակ է ներխուժել տունս:
Ինչպե՞ս թե՝
Դիզակը գերեվարված է թշնամու կողմից,
Եվ մեր հինավուրց Արցախի հողում
Թուրքերն են վխտում օրուցերեկով
Վանք ու մատուռներ սրբապղծելով,
Օջախներն հայոց
Հրի մատնելով,
Մոխիր դարձնելով...
Վիշտն այնքան խորն է,
Որ առաջվա պես
Իշխանագետը էլ չի խոխոջում,
Ասես պապանձվել՝
Զարկված տղերքի կորուստն է ողբում...
……..

Արևսարի կատարին
Ասում են՝ իբրև,
Երեկ գիշերը
Կարմիր ձիավոր է երկնքից ցած իջել՝
Դավթի սուրը ձեռին,
Ում հետևել են քառսուն հայ քաջեր...
Եվ ուխտ են արել՝
Չվերադառնալ տուն,
Մինչև թշնամին սրախող չարվի,
Ոտնակոխ չարվի
Ու երկրից քշվի...
Փրկության համար
Չկա ուրիշ ելք,
Միանալ է պետք
Քաջ ձիավորին...

* * *

Հողս բզկտված է,
Հայրենիքս՝ արնածոր,
Ինձնից ուժով խլել,
Հոշոտել են փորձում
Արցախատունս:
Սավառնող արծիվներն այս ո՞ւր մնացին...
Գիշանգղների պես
Բայրաքթարներն են
Երկնում վնգստում,
Իսկ պահապան արծիվները
Ուշանում են...

* * *

Հողս արյունոտվել է
Պատերազմում զարկված տղաների
Սառն համբույրից...
Հողս արցունքոտվել է
Որդեկորույս մայրերի
Սրտակեղեք լացից...
Հողս ծխում է
Հրդեհված արտերի
Մոխրացող ստվերներից...
Հողս ոռնում է
Վիրավոր մասրենու
Ճչացող ցավից...
Հողս մխում է
Հայասպան թշնամու
Լիրբ հռհռոցից...
Ինչպե՞ս ամոքեմ երկրիս վերքերը,
Որ վերընձյուղվի,
Վեր հառնի մոխիրներից...

ԱՇԽԱՐՀԸ ԿՈՒՅՐ Է..

Ցավից
Ցնցվել է ըմբոստ երկիրն իմ,
Խառնվել են իրար կրակ ու կայծակ,
Մոլորվել են երկնում
Աղավնիները ճերմակ,
Կտուցներին
Մահաբեր ռումբեր են կախվել...
Դաժան կռիվ է Արցախի հողում,
Թիրախում թշնամու
Մայրաքաղաքն է իմ նորից հայտնվել:
Հրդեհ է ամենուր,
Հրթիռների ոռնոց,
Ամենուր մահվան տեսիլներ են շրջում...
Սևազգեստ մայրն է
Մինուճար որդու կորուստը ողբում,
Զարկված ծերուկն է
Մահճում խուլ տնքում,
Բարուրի մեջ
Նորածին մանչուկն է նեղվում...
Արցախիս ճիչը
Հասել է անգամ ծով տիեզերքին,
Սակայն՝ անօգուտ:
Աշխարհը կույր է,
Աշխարհը խուլ է,
Ոչինչ լի լսում...

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես երկյուղում եմ,
Երբ մտերիմ մարդիկ
Հիշատակում են ծննդյանս տարեդարձի մասին
Եվ շնորհավորում
Վա՛յ,- ասում եմ,- ամոթ է,
Մի՛ հիշեցրեք ինձ
Նոյեմբերի 7-ի աղետալի օրը,
Որ ողբերգական էր Արցախիս համար,
Ճակատագրական...
Տղերքը
Ձնայած կռվում էին հերոսաբար,
Եվ քաջի մահով
Շատերը ընկան
Բեդաքաղաքի պարիսպների տակ,
Հրադադարից րոպեներ առաջ...
Սակայն
Սկուտեղի վրա այն հանձնվեց թշնամուն,
Անարգվեցին
Նահատակված տղաների հիշատակը,
Սրբությունները բոլոր...
Այսօր էլ
Շարունակվում է մղձավանջը դաժան,
Ու հավատալ չի լինում,
Սթափվել չի լինում,
Մեղավորի պես գլուխս կախել
Վախենում եմ՝
Նախկին հպարտությամբ
Փողոցով քայլել,
Մարդկանց աչքերին աներկյուղ նայել...
Հանցանքի տերը
Ասես ես լինեմ,
Շշկռվել եմ ու
Հանդիմանում եմ հաճախ ինքս ինձ...
Չգիտեմ ինչպես «մեղքերս» քավեմ
Եվ հպարտ քայլեմ...
Բարեկամնե՛րս,
Ծննդյան առիթով
Մի՛ շնորհավորեք ինձ,
Ձեզ շատ եմ խնդրում,
Ավելի լավ է՝
Հանդիպման պահին
Բարև տաք՝ անցնեք...

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՅՔԻ ՄԱՍԻՆ

Արցախի Հեղափոխական կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐՎԱԾ ԵՎ ԾԱԽՍՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկղ)	Այլ տվյալներ
1. Նախորդ տարվանից առաջացած մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	—	—	—	—
2. Մուտքի վճարներ	—	10,0	Կանխիկ/դրամարկղ	—
3. Անդամակցության վճարներ	—	—	—	—
4. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ Արտուր Արկադիի Օսիպյան, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Պարսեղովի փող. 2.4 բն.18.	—	10,0	Կանխիկ/դրամարկղ	—
5. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
6. Օրենքով նախատեսված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում	—	—	—	—
7. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
8. Ընդամենը մուտք արված դրամական միջոցներ	—	—	—	—
9. Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ)	—	—	—	—
10. Սոցիալական վճարներ	—	—	—	—
11. Գույքի վարձակալության վճար (նշել գույքի անվանումը, վարձակալության ժամկետները)՝ 1) 2) 3)	—	—	—	—
12. Կոմունալ վճարումներ (նշել կոմունալ ծառայությունների անվանումը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
13. Հարկեր և տուրքեր (նշել հարկատեսակը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
14. Գույքի ձեռքբերման համար կատարված ծախսեր (նշել գույքի անվանումը և քանակը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
15. Տրանսպորտային ծախսեր	—	—	—	—
16. Գործուղման ծախսեր	—	—	—	—
17. Այլ ծախսեր՝ կուսակցության հաշվետվության հրապարակում ԶԼՄ միջոցով	—	10,0	կանխիկ	—
18. Ընդամենը ծախսված դրամական միջոցներ	—	10,0	կանխիկ	—
19. Մնացորդը տարվա վերջում	—	—	—	—

Արտուր Արկադիի Օսիպյան
Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, հասցեն, համառոտ նկա- րագիր, չափսերը	Այլ տվյալներ
1. Առկա անշարժ գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	—	—	—	—
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝	—	—	—	—
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝	—	—	—	—
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝	—	—	—	—
5. Ընդամենը	—	—	—	—

Արտուր Արկադիի Օսիպյան
Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, մակնիշը և սերիան, թողարկման տարեթիվը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	—	—	—	—
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
5. Ընդամենը	—	—	—	—

Արտուր Արկադիի Օսիպյան
Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ՕՏԱՐՎԱԾ ԿԱՄ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ

Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը	Օտարման ձևը	Այլ տվյալներ
1. —	—	—	—	—
2. —	—	—	—	—
3. —	—	—	—	—

Արտուր Արկադիի Օսիպյան
Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԻՆԳՋՈՒՆԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Անցած տարվա դեկտեմբերից շրջափակման մեջ գտնվող Արցախում կյանքը սկսեց ընթանալ ոչ սովորական հունով: Ստեղծված պայմաններում տուժեցին գրեթե բոլոր ոլորտները: Մարզաշխարհում եւս դժվարություններ են առաջացել, բայց «Լուսարար»-ի անդրադարձը տվեց այն համոզմունքը, որ իսկական մարզիկները չեն նահանջում դժվարությունների առջեւ:

Հերթական հաճելի զրույցն ունեցանք Արցախի վինգչունի եւ թայչիի ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ, ՄՊՄԴ-ի վինգչունի մարզիչ Սայաթ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ հետ: Զրուցելով չինական մարտարվեստում՝ վինգչունում, երկարամյա փորձ եւ ձեռքբերումներ ունեցող մարզչի հետ՝ պարզաբանեցինք, որ հոգում հավերժ հիասքանչ գարուն պահպանելն ամենեւին էլ անհնար չէ: Չէ՞ որ «վինգչուն»՝ թարգմանաբար նշանակում է հավերժ հիասքանչ գարուն: Գուցե եւ պատահական չէ, որ գեղեցիկ ու փիլիսոփայական միտք ունեցող անունն է կրում այդ հզոր մարտարվեստը: Միշտ եւ ամեն ինչում, թեկուզ դժվարին իրավիճակի մեջ նկատել կյանքի լուսավոր կողմերը, լինել ուժեղ, բայց բարի, դժվարությունները հաղթահարելու համար են, հաղթահարեցի՞ր, ուրեմն առաջ ես գնում դեպի կատարելություն՝ հղկելով վարպետությունդ պարապմունք առ պարապմունք. սա է չինական մարտարվեստի փիլիսոփայությունը:

Վինգչունի փիլիսոփայությունն առանձնանում է իր եզակիությամբ. դրա տեխնիկան ներառում է ցանկացած բռնումից կամ հարձակումից ազատվելու եւ պաշտպանվելու ու միաժամանակ հակահարձակվելու հզոր հնարներ: Դրանով պարապող մարզիկը ոչ միայն ձեռք է բերում այդ հմտությունները, այլեւ փոխվում են նրա համոզմունքներն ու աշխարհընկալումը, սկսում է գործել այն համոզմունքը, որ ցանկացած անելանելի թվացող իրավիճակից ելք կա, ընդ որում՝ կյանքի տարբեր ոլորտներում:

«Հավերժ հիասքանչ գարուն» ընտրած մարզիկները շարունակում են իրենց մարզումները շրջափակման պայմաններում, հաղթահարում են ցրտաշունչ ձմռան սառնամանիքին չջեռուցվող մարզադահլիճում պարապելու դժվարությունը, սովորում են մարզվել լույսի բացակայության դեպքում, շարունակում են հավատարիմ մնալ իրենց ընտրած մարտարվեստին, քանի որ ունեն լավատես մարզիչ, որն իր ներսից է ջերմություն ու լույս ճառագում՝ մարզիկներին սովորեցնելով հաղթահարել դժվարությունները սեփական օրինակով:

- Սայա՛թ, ի՞նչ դժվարությունների է հանդիպում ֆեդերացիան՝ կապված շրջափակման հետ:

- Ֆեդերացիան առաջին հերթին տուժում է նրանով, որ շրջափակման պատճառով չենք կարող գնալ եւ մասնակցել դրսում կազմակերպվող միջոցառումներին, որոնց մասնակցելը շատ կարեւոր է մարզիկների զարգացման համար: Մարզիչներս էլ չենք կարող ներկայանալ ու մասնակցել դրսում կազմակերպվող որակավորման դասերին: Ճանապարհի փակ մնալն ավելի երկարանալու դեպքում չենք կարողանա ձեռք բերել նոր մարզագույք: Մարզադահլիճում ունեցած մարզագույքի որոշ տեսակներ պատռվում կամ մաշվում են: Հիմնական դժվարությունները դրանք են:

- Արդյոք նվազե՞լ է մարզիկների թիվը շրջափակման պայմաններում:

- Մարզիկների թվի նվազում չկա, հակառակը, ունենք նոր մարզիկներ, որոնք շրջափակման օրերին սկսել են հաճախել վինգչունի պարապմունքների: Բայց քանի որ տրանսպորտի հետ կապված խնդիրներ են լինում, բացակայությունները հաճախ են լինում: Մայրաքաղաքի ծայրամասերից հաճախող կրտսեր մարզիկների համար դժվար է լինում ներկայանալը, հատկապես եղանակային վատ պայմաններում: Ընդհանուր առմամբ մարզիկների հաճախելիությունը նորմալ է:

- Ի՞նչ փոփոխություն եք մտցրել մարզումների մեջ՝ շրջափակմամբ պայմանավորված:

- Առանձնակի փոփոխություններ չեմ մտցրել մարզումների գրաֆիկի եւ ձեւի մեջ: Պարապմունքներն ընթանում են գրեթե նույն հունով: Էլեկտրաէներգիայի հովհարային անջատումների դեպքում մարզադահլիճը լուսավորում ենք հեռախոսների լույսերով: Պարզապես աշխատում եմ, որ այդ ընթացքը չհամընկնի մենամարտային հատվածի հետ: Մարզիկների անվտանգությունից ելնելով՝ ձգտում եմ այնպես հարմարեցնել, որ մենամարտերը կատարվեն պարապմունքի այն հատվածում, երբ կա պատշաճ լուսավորվածություն: Նախապես իմանալով էլեկտրաէներգիայի հովհարային անջատումների գրաֆիկը՝ հարմարեցնում եմ պարապմունքի ծրագրի հետ: Այդպես մարզումների ծրագիրը ստացվում է կատարել ամբողջությամբ:

- Ի՞նչ եք խորհուրդ տալիս մարզիկներին, ինչպե՞ս դիմակայել դժվարություններին:

- Մարզիկներին խորհուրդ եմ տալիս նախ գիտակցել, որ նրանք մարզվում են ոչ թե չեմպիոն դառնալու կամ ընդհանրապես մրցույթներին մասնակցելու (քանի որ մեկ-մեկ նկատում եմ, որ որոշ մարզիկներ նեղվում են մրցումներին չմասնակցելու համար), այլ՝ ամուր առողջություն, ուժեղ ոգի, պայծառ միտք, բարի հոգի, առողջ ընկերական շրջապատ ունենալու համար: Եվ ամենակարեւորը՝ հիշեն, որ իրենք մարզվում են իրենց եւ հարազատներին պաշտպանել կարողանալու, ճիշտ եւ արդյունավետ մարտավարություն սովորելու համար: Իսկ կյանքի դժվարություններին խորհուրդ եմ տալիս նայել մարզիկի հոգեբանությամբ, այսինքն՝ չընկճվել, միշտ պատրաստ լինել ծանր հարվածների, բայց կարողանալ խուսափել այդ հարվածներից, իսկ ընդունելու դեպքում արագ կարողանալ ոտքի կանգնել, լինել ոգով ուժեղ, համարձակ, իսկ մտքով՝ արթուն, գործել կայծակնապես: Այս են սովորեցնում մարտարվեստները: Շրջափակման պատճառով առաջացած դժվարություններից չպետք է վախենալ, այլ պետք է գտնել ելքեր եւ հաղթահարել դրանք, ինչն էլ անում ենք մեր սաների հետ միասին: Միշտ եւ ամեն ինչում եղեք լավատես, միասնական եւ միմյանց օգնող թե՛ պարապմունքի ժամանակ, թե՛ հետո:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պոլ Էյուարի Տուն Ֆրանկոֆոնիայի Կենտրոն հիմնադրամի 2022թ. գործունեության մասին

1. **Հիմնադրամի լրիվ անվանումը՝** Պոլ Էյուարի Տուն Ֆրանկոֆոնիայի Կենտրոն հիմնադրամ

1.1 Գրանցման համարը 443.160.12342
1.2 Գրանցման ամսաթիվը 14.10.2015թ.
1.3 Գտնվելու վայրի հասցեն ՀՀ, ք. Ստեփանակերտ, Խ. Աբովյան 50
1.4 Հեռախոս /+37497/ 115119

2. **Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝** Ժերար Գերգերյան

3. **Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝**
ՀՀ կրթության, գիտության և սպորտի նախարար (Խորհրդի նախագահ)
ՀՀ արտաքին գործերի նախարար
ՀՀ Ստեփանակերտ քաղաքի քաղաքապետ
ՀՀ Շուշի քաղաքի քաղաքապետ
Ֆրանսիայում ՀՀ ներկայացուցիչ
«Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ներկայացուցիչ
Ֆրանսիական բարեկամ քաղաքների քաղաքապետերին միավորող միության նախագահ
Ֆրանսիայի Վալանս քաղաքի քաղաքապետ
Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետ

4. **Աշխատակազմը՝**
Աշխատակազմում ընդգրկված անձանց ընդհանուր քանակը 31.12.2022թ. դրությամբ կազմել է հոգի, իսկ 2022թ. նրանց հատկացված աշխատավարձի ընդհանուր գումարը՝ 5.771.000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները):

5. **Իրականացված ծրագրերը՝** *ՀՀ դրամ*

Ծրագրային, նպատակային դրամաշնորհների տրամադրում	1.718.000
Նվիրատվություն «Արցախի ազգային նվագարանների պետական նվագախումբ» ՊՈԱԿ-ին	*1.251.000*
Ուսման վարձի ֆինանսավորում	*467.000*
Ընդհանուր ծրագրային ծախսեր	4.648.000

6. **Ֆինանսական աղբյուրները՝** *ՀՀ դրամ*

Վաճառքից/ծառայությունների մատուցումից մուտքեր	10.416.000
Հայաստան Համահայկական Հիմնադրամ	1.271.000
FONDS ARMENIEN	6.726.000
Այլ	90.000

7. **Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** *ՀՀ դրամ*

7.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը 19.518.000

Հիմնադրամի գործադիր տնօրեն՝
Ժերար Գերգերյան

Գլխավոր հաշվապահ՝
ՖԻՆԱՆՍ ՊՐՈ ՓԲԸ

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

«Հեռանկար» հասարակական կազմակերպությունը: Գրանցման համար՝ 443, գրանցման ամսաթիվ՝ 31.05.2019թ.: ՀՎՀՀ 90044808: Պարտատերերին խնդրվում է երկամսյա ժամկետում հետաքրքրող հարցերով դիմել կազմակերպության գրասենյակ՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, փողոց Ալեք Մանուկյան 12/52 հասցեով: Հեռախոս՝ 097143100:

Նախագահ՝
Մարինե Հովագիմյան:

Ի ԼՐՈՒՄՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«Լուսարար» թերթի 2023թ. հ.2-3-ում տպագրված լուծարվող կազմակերպությունների վերաբերյալ

Պարտատերերին խնդրվում է հետաքրքրող հարցերով երկամսյա ժամկետում դիմել նշված կազմակերպությունների լուծարման հանձնաժողովներին:

Հեռախոսներ՝ Հադրութի շրջվարչակազմ - 097 20 00 79
Շուշիի շրջվարչակազմ - 097 22 12 16
Ասկերանի շրջվարչակազմ - 0476 77 3 17
Մարտակերտի շրջվարչակազմ - 0474 2 13 70
Մարտունու շրջվարչակազմ - 0478 2 25 25
Շահումյանի շրջվարչակազմ - 0479 5 06 93

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի «24» հունվարի 2023թ.
01-01/23 որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի
2022թ. գործունեության մասին

1. **Հիմնադրամի լրիվ անվանումը՝** «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ

   1.1 Գրանցման համարը 443.160.12377
   1.2 Գրանցման ամսաթիվը 26.01.2016թ.
   1.3 Գտնվելու վայրի հասցեն ք. Ստեփանակերտ, Վ. Վաղարշյան 7
   1.4 Հեռախոս /+374479/ 70035

2. **Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝** Նվեր Միքայելյան
3. **Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝**

Հովհաննես Վաչեի Թոքմաջյան	Արման Մարատի Հակոբջանյան
Արայիկ Վլադիմիրի Հարությունյան	Գագիկ Միքայելի Բաղունց
Արտակ Արտյոմի Բեգլարյան	Կարեն Արմոյի Ներսիսյան
Կարեն Ալեքսանդրի Շահրամանյան	Էլեոնորա Վյաչեսլավի Ավանեսյան
Անահիտ Անդրանիկի Հակոբյան	Ժիրայր Մելսիկի Միրզոյան
Հասմիկ Ջումշուդի Մինասյան	Արմավիր Գևորգի Գալստյան
Արամ Կամոյի Հարությունյան	Էդգար Արմենի Վարդանյան
Արմեն Թեմուրի Սարգսյան	Սուրեն Գագիկի Մարտիրոսյան
Դավիթ Ալբերտի Սարգսյան	Լիլիթ Նվերի Հարությունյան
Գեորգի Լևոնի Հայրիյան	Դավիթ Էդիկի Մաթևոսյան

4. **Աշխատակազմը՝**
   Աշխատակազմում ընդգրկված անձանց ընդհանուր քանակը 2022թ. վերջին կազմել է 304 հոգի (ներառյալ համատեղության հիմունքներով աշխատողները և սպասարկող անձնակազմը), իսկ 2022թ. աշխատակազմին հատկացված աշխատավարձի ընդհանուր գումարը՝ 704 830 000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները), այդ թվում հոգաբարձուների խորհրդի անդամ հանդիսացող աշխատակիցներին հատկացված աշխատավարձ (9 հոգի) ՝ 22 268 000 ՀՀ դրամ:
5. **Իրականացված ծրագիրը՝**
   Բարձրագույն կրթության, հանրակրթության, միջին մասնագիտական կրթության, հետբուհական կրթության կազմակերպում, գիտական, գիտաարտադրական, փորձագիտական, հետազոտական, հրատարակչական գործունեության իրականացում:
6. **Ֆինանսական աղբյուրները՝**

	ՀՀ դրամ
Պետական բյուջեից անհատույց դրամական ստացումներ	710 778 000
Ուսման վարձերից և ուսումնական այլ գործունեությունից մուտքեր	144 211 000
Արտադրանքի վաճառքից և ծառայությունների մատուցումից մուտքեր	13 778 000
Այլ մուտքեր	21 000

7. **Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** — *ՀՀ դրամ* 847 020 000
   7.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը — 847 020 000
8. **Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնողը՝** «Աուդիտ Պրո» ՓԲԸ (Լիցենզիա թիվ ԱԾ – 0003, տնօրեն՝ Ա.Խաչատրյան, աուդիտոր՝ Զ. Վերդիյան):

Ղեկտոր
Միքայելյան Նվեր

Գլխավոր հաշվապահ
Խուրշուդյան Սուսաննա

audit pro

Աուդիտ Պրո
ՀՀ, ք. Ստեփանակերտ
Վ. Մամիկոնյան 29/6

+ 3747 959575
www.auditpro.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

3

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

10 մարտի 2023թ.
«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան
Տնօրեն

Զարինե Վերդիյան
Աուդիտոր

ԿՈՐԵԼ Է

Սամվել Հենրիխի Դավթյանի՝ իրավաբանի մասնագիտությամբ դիպլոմը՝ տրված Երևանի «Երևան» համալսարանի կողմից 2006 թվականին:

Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Տպաքանակ՝ 1650:
Ստորագրված է տպագրության՝ 24.03.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: